Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՇՐՋԱՆ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Դ,

4 ՅՈՒՆԻՍ 1876

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1876

ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ստեփան Աբրամեան — փոխ. — Ա. Ամենապետ
Ռուսինեան — էֆէնտի — »
Տիգրան Էուսուֆեան — էֆէնտի — »
Գարեգին Յ. Մելիքեան — » — Ա. Ատենադպիր
Համբարձում Ս. Սլանեան — » — » »
Աւետիք Աղմոն Տիրրի — » — » »

ՀԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Յովհաննէս Քր. Մկրտիչ
Տ. Գրիգոր Քր. Աշիմեան
Սարգիս Աղաբէկեան — էֆէնտի

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Նուրեան — էֆէնտի
Գէորգ Սոխեանեան — »
Պօղոս Պասնասեան — »

ԿԱՀԱՆԱՅՈՑ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Աշեանորեան — էֆէնտի
Ստեփան Պէշիկճեան — »
Յակոբ Քաղաքեան — »

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տիգրան Էուսուֆեան — էֆէնտի
Օգսէն Խօճասարեան — »
Դաւիթ Շահպազեան — »

ՀԱՄԱՐԱՒԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Համբարձում Մոգոլեան — էֆէնտի
Եղիազար Մելիքեան — »
Յարութիւն Մէրէմ-Գուլի — »

ԻՐԱՒԱՄՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Դիմիտ վարդապետ Այսանեան
Կարապետ Շահպազեան — էֆէնտի
Նշան Բասազեան — »

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Միքայէլ Սամիկոնեան — էֆէնտի
Ռուսինեան
Աւետիք Աղմոնեան — »

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Իւթիշեան — էֆէնտի
Գէորգ Քէրքէշեան — »
Ստեփան Փափազեան — »

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՍ 1876 ԱՄՍԷՆ

ՆԻՍՏ Դ.

ՀՈՒՆԻՍ 1876

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵՊԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Խորէն Ա. Քեռիսկ. Նար Պէյ Բ. 2
2. Կարապետ Էշպակ. Սեբաստիա
3. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց
4. Գարեգին „ Թաշճեան
5. Խորէն „ Կիրոյեանց Բ. 2
6. Հմայեակ „ Դիմաքսեան
7. Մատթէոս „ Իզմիրլեանց
8. Յովհաննէս „ Փափազեան
9. Ներսէս „ Ասլանեան
10. Պօղոս „ Խուտամեան
11. Էգնիկ „ Ապաշուեի
12. Ա. Իսահակեան Բ. Մամբրէեան
13. Գէորգ Արտունի
14. Գրիգոր Անէլեան
15. Խորէն Քէշիշեանեան
16. Յարութիւն Սերոբեան
17. Յովհաննէս Մկրտեան
18. Սարգիս Ստեփանոսեան Բ. 3
19. Պահակ Տ. Սարգսեան
20.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գուշգափու, Կլխոյկ փաշա և Գուշգափուի դուռ

21. Գրիգոր Պէրպէրեան Բ. Պ
22. Գէորգ Սոխմաբաճեան
23. Խաչիկ Մանկասարեան Բ. Պ
24. Կարապետ Աղարոմանեան Բ. 2
25. Համբարձում Մազգալեան
26. Մինաս Գասպարեանեան
27. Յովհաննէս Խորասանեան Բ. 3
28. Յովհաննէս Պողոսեան
29. Յովհաննէս Սուրենեան Բ. 3
30. Ն. Մէղապուրեան Տաքթոր
31. Պօղոս Պասնասեան Բ. 3
32. Պետրոս Քէչէճեան Հ.
33. Ռուսինեան
34. Սարգիս Աղաբէկեան Բ. 2
35. Պահակ Ակրոբ
36. Անանքերիմ Մանուկեան Բ. Պ
37. Փէչտիմալճեան Տաքթոր Բ.

(Բ. Վիճակ)

Պէշիկթաշ

38. Բարսեղ Հայաճեան Բ.
39. Կարապետ Ս. Խաչիկեան
40. Յարութիւն Մարտարեան

Լիւլիգափու

41. Խաչատուր Դաղարոսեան Բ.
42. Կարապետ Գ. Փափազեան Բ. 2
43. Մարուքէ Ֆրէնկեան Բ.
44.

Իսկիւտար Ս. Խաչ

45. Յովհաննէս Շահեան
46. Յովսէփ Ս. Մարտիրոսեան Բ.
47. Սերոբէ Պասմաճեան
48. Ստեփան Ասլանեան

Իսկիւտար Ս. Կարապետ

49. Մինաս Պահճեքարուրեան Բ.
50. Յովհաննէս Ճիլանեան Բ.
51. Նիկողոս Աւանեան
52. Տրդատ Փափազեան Բ.

(Գ. Վիճակ)

Բերա

53. Արիկ Ռոնճեան
54. Գրիգոր Սէլիմիսեան
55. Մարտիրոս Յ. Տիրեան
56. Միքայէլ Սամիկոնեան Բ.
57. Նշան Բազազեան
58. Ստեփան Խեղիրեան
59. Տելեմաք Ս. Էլաբրեան Բ.
60.
61.

Գասրամ փաշա

62.

Միրզիոզ

63. Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
64. Յակոբ Կոստանդեան Բ. Պ
65. Յակոբ Պ. Նոյատունկեան
66. Յովհաննէս Ազարիկեան Բ.
67. Տիրան Էուսուֆեան

Պէյրօղ և Դարարիա

78. Յարութիւն Մէրէմ—Գուլի

(Դ. Վիճակ)

Զուզդուճնոյ և Խնատիէ

69. Յովհաննէս Լասանեան
70. Ստեփան Պէյրիկճեան

Բ. Բացակայութիւն առաջին։

Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառ։

Գատրգիոզ

71. Կարապետ Շահպազեան Բ. 2
72. Մկրտիչ Մուրատեան Բ.

Նարլիգեան

73. Յակոբ Եղիազարեան Բ.

Էնիմանալի Սամարիոյ

74. Օգոստ Թոմասեան Բ. 2

Թոմիզաֆու

75.

Լյուլ Ս. Էդիս եւ Ս. Աստուամատին

76. Գաբրիէլ Յ. Մելիքեան

Գուրուչիշվէ

77. Աստֆա Իսկիտարեան

Հիսար եւ Պյուհի գիւղ

78. Յովհաննէս Նուրեան

Նոր գիւղ եւ Արէնիա

79. Ղազար Հովուեան

Պոլսոյ

80. Աստուր Գուլասաղեան Բ.
81. Մկրտիչ Գ. Լիսեան Բ. Պ
82. Յովհաննէս Կիրիկեան Բ. 2

Բուսակոմիրիկ

83. Յարութիւն Զլնիրեան
84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ

(Ե. Վիճակ)

Սամսիա

85. Աղեքսան Պէլիրեան
86. Աւետիս Բոյոլեան Բ.
87. Եղիազար Մելիքեան Բ. 2
88. Մինաս Ճաֆնաֆեան Բ.
89. Յակոբ Բաղդասեան
90. Յակոբ Ամասեան Բ.
91. Նազարէթ Շահպազեան Բ. Պ
92.
93.
94.

Խասգիւղ

95. Աստուր Աւետն Տիրրի
96. Խաչատուր Պ. Մինասեան Բ.
97. Իսրայէլ Պէյլիրեան
98. Սարգիս Արապեան
99. Սարգիս Արրահամեան
100. Սիմոն Մինասեան

ԴԱՒԱԴԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆՔ

Հրարին

101. Մանուկ Անանեան

Գեւրանեաց

102

Ադրիանուպոլիս

103. Ռուբէն Կիւմիշկիրտանեան Բ. 2

Նիկոմիդիա

104. Տիգրան Կիւմիշկիրտանեան Բ. 3

Ակռ

105. Պետրոս Մրատեան

Զատրանիսար

106.

Արտակեր

107. Կարապետ Խաչիկեան

Բաղէշ

108

Պրուսա

109. Գրիգորատուր Ղազարոսեան

Եւդոկիա

110. Մելքոն Հարսենեան

Սեբաստիա

111. Համբարձում Աբանեան

Բոլու

112. Յովհաննէս Աղեանորեան Բ.

Լեւնսա

113. Յակոբ Իսթինեան

Մանիսայի

114.

Հոնդրն

115.

Երզնկա եւ Բարերդ

116.

Թէքիրտաղ

117. Տիգրան Գ. Սինանեան

Կեսարիա

118 Մատթէոս Մ. Այվազեան Բ. Պ

Խարբերդ

119. Յովհան Իշոեան

Պալիքեսիր

120. Յովհաննէս Յովսէփեան Բ.

Մուշ

121. Ստեփան Գ. Պ. Փափազեանց

Տիվրիկ

122.

Զէյթուն եւ Մարաշ

123.

Տրապիզոն

124. Մկրտիչ Կիւրճեան Բ. 3

Պայազատ

125.

Տիգրանակերտ

126. Թաղէոս Թէրէան

Էվան

127. Սիմոն Մաքսուտեան Բ

Աղթամար

128.

Հալէպ եւ Այնթապ

129.

Սեբաստիա

130. Մկրտիչ Մելիքեան

Մուսուխ

131.

Կարս

132. Աբրահամ Յ. Այվազեան

Զէյթունակաղ

133. Համբարձում Սարգսեանեան

Գանդարիա

134

Ատանա

135

Սքիդր

136. Մատթէոս Այվազեան Բ. 2

Լոզգատ

137. Լազարոս Պալեզեան Բ. Պ

Մարաթիա

138.

Իզմիր

139.

Եղիպտոս

140

ՕՐԱՏԱՐԳ.

Ա. Պատասխանագիր Բ. դրան Աղթամարայ խնդրոյն համար
Բ. Քնարերգի Վարչական Ժողովոյ
Գ. Ցեղեկագիր Գաւառիարքական հարցմանց յանձնախմբին
Դ. Ցեղեկագիր Իրաւասութեան դիւանի
Ե. Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Վիճաբանութիւն Բ. յոդուածոյ վրայ, որ է Թաղական մասնակցութիւն։

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամը 7ին 'ի ներկայութեան 48 երեսփոխանաց, որոց թիւն 'ի վերջոյ յանդեցաւ 65 ի։

Ա.

Քնդունելութիւն ատենագրութեան Բ. նատի։

Ատենապետ փաշան՝ նախ քան զ. նատի ատենագրութեան դեռ պատրաստ չըլլալը և անկէ առջի Բ. նատին ատենագրութեան այս առաւօտ ցրուած ըլլալը ծանուցանելով, հրաւիրեց զերեսփոխանսն Բ. նատի ատենագրութեան վրայ դիտողութիւն եթէ ունին ընելու։ Եւ տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ, քարոզի դրուա զայն՝ զոր ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ։

Բ.

Բացակայութիւն

Ատենապետ փաշան՝ անձնական տկարութեան պատճառաւ այսօրուայ նստին ներկայ գտնուելու անկարող ըլլալին նամակաւ յայտնող երկու երեսփոխանաց անունները ժողովին հաղորդելէ ետև, որք են՝

Խաչիկ էֆէնտի Մանկասարեան
Գրիգոր » Պէրպէրեան

նշանակել առաւ ներկայութեան տեսարին մէջ։

Գ.

Հրաժարական

Ատենապետ փաշան ծանուցանելով նաև թէ՝ Թէրէսիէեան Պետրոս էֆէնտիին, որուն նոխորդ հրաժարականին ընդունուած չըլլալը Սրբազան Պատրիարքը Հոր կողմէն գրով ծանուցուած էր իրեն, կրկին հրաժարագիր եկածէ զոր ներկայացուց ժողովին, և կարդացուեցաւ, որ է։

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Երեկ երեկոյին ստացայ Ձեր բարձր Սրբազնութենէն՝ 22 մայիս թուականաւ՝ առ իս շնորհուած պաշտօնական գրութիւնն, որով՝ Ազգային ժողովոյ վերջին նիստին մատուցած հրաժարականս ընդունելու։ Ինձ համար դիտելի է, որ Ազգային ժողովոյ վերջին նիստին մատուցած հրաժարականս ընդունելու։ Ինձ համար դիտելի է, որ

բաժարագրոյս անդնդունելի դատուած ըլլալը Ծանուցանելը Հանդերձ՝ հրաւէր ուղղուած է ինձ միանգամայն, իբրև Խմբագրութեան դիւանի Ներքին անդամ՝, ներկայանալ Կալաթայի խարհրդարանը յառաջիկայ ուրբաթ օր։

Պատրաստելի ժողովոյդ այս կրկին համակրական ու վառահաւատ ցոյցերուն համար խորին երախտագիտութիւնս կայտնեմ։ Եւ թէպէտ անոր ծանրագնի վայրկեաններէն մին անգամ ինձ վերաբերեալ անձնական խնդրոյ մը զոհել ստիպեալ կրժկամակիս՝, բայց և այնպէս կարեւորագոյն պատճառներէ ստիպուած եմ մի անգամ կրկնել իմ հրաժեշտս, խնդրելով Ձեր Բարձր Սրբազնութենէն որ բարեհաճիր վերջնական կերպիւ ընդունելի ընել զայն՝ Ազգային ժողովոյ մեծարելի անդամոց։

Մնամ Ամեն. Սրբազան Հայր,

Ձերումդ Բարձր Սրբազնութեան ամենախոնարհ և հնազանդ ծառայ

Գումգարու [Ստորագր]

25 մայիս 1876 ՊԵՏՐՈՍ Գ. ՊԷՐԷՍՏԵՃԵԱՆ

Առենապետ փոխան՝ Թէրէստեճեան Հիլնտիի տոն հրաժարագրին իրեւ պարզ և կրկին հրաժարական քուէի դնելով, ժողովը ԸՆԴՈՒՆԵՑ զայն միաձայնութեամբ։

Ե.

Տեղեկութիւն նախաքննիչ դիւանաց առենապետաց ընտրութեան և տոյն դիւանաց համագումար ժողովով պատրաստած Քաղ. ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկին վրայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Պարտք կհամարիմ Դիւանին կողմէ տեղեկութիւն տալ ժողովոյդ թէ՝ վերջին թերթ նատի մէջ եղած որոշման համեմատ՝ Ներքնոյր Նախաքննիչ դիւանաց անդամներն անցեալ ուրբաթ օր հրաւիրելով գումարուեցան, և իւրաքանչիւր դիւան իւր առենապետն ընտրելէ ետև, դիւանական համագումար ժողով կազմելով, Քաղ. ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկը պատրաստեցին զոր դիւանս և Սրբազան Պատրիարքն ընդունեցինք, և այս ցանկը տալէ առաջ՝ ամենուն հաղորդեցինք հրաւիրագրոյ հետ։ Երբ կարդը գայ, այս ցանկին վրայ պիտի կատարենք Քաղ. ժողովոյ ընտրութիւնն ինչպէս որ Օրէնքդն է պարտն։

Այս ըսելով Առենապետ փոխան՝ ժողովին ներկայացուց Քաղ. ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկին բնագիրը, նոյնպէս և Նախաքննիչ դիւանաց ընտրեալ առենապետաց ցուցակն։ որք հետեւեալներ։

Նախաքննիչ դիւանաց Առենապետք

Զեռնհատութեան	Դիւանի	Առենապետ	Տ. Յովհաննէս քահանայ	Մկրտեան
Դատաստանութեան	»	»	Յովհաննէս էֆենտի	Նուրեան
Կալուածոց		»	Յակոբ »	Քազազեան
Հատարտչութեան	»	»	Յարութիւն »	Մէրիէմ-Գուլի
Յարաբերութեան	»	»	Տիգրան »	Եուսուֆեան
Իրաւունքի	»	»	Տ. Ներսէս վարդապետ	Ալպանեան
Նախաձեռնութեան	»	»	Ռուբինեան էֆենտի	
Խմբագրութեան	»	»	Կարապետ »	Իւթիւճեան

Ուրբաթ 23 մայիս 1876 Ղալաթիա

Վերոգրեալ անձինքը Նախաքննիչ Դիւանաց Առենապետ կարգելով Ազգ. ժողովոյ Մայր Դիւանին կը հաղորդենք

[Ստորագրութիւնք]

Ներսէս վարդապետ	Ալանեան	Միքայէլ	Մամիկոնեան
Յովհաննէս քահանայ	Մկրտեան	Ռուբինեան	
Գրիգոր »	Սմիմեան	Սոսքել	Սիթան Տիրրի
Սարգիս	Ազարիկեան	Յարութիւն	Մէրիէմ-Գուլի
Յովհաննէս	Նուրեան	Նշան	Քազազեան
Յակոբ	Քազազեան	Ստեփան	Պէյլիկճեան
Պօղոս	Պառնասեան	Եղիազար	Մելիքեան
Գէորգ	Սոխանդրեան	Համբարձում	Մազգալեան

Քաղ. ժողովոյ ընտրելիք

1. Ալպրօ Սահակ	էֆենտի	11. Կրճիկեան Անդրանիկ	պէյ
2. Նորատունկեան Յակոբ	»	12. Մազգալեան Համբարձում	»
3. Մարկոսեան Գրիգոր	»	13. Ազնաւորեան Յովհաննէս	»
4. Քազազեան Յակոբ	»	14. Պզտճեան »	»
5. Շահպազ Կարապետ	»	15. Պէյլիկճեան Ստեփան	»
6. Սարգսեան Արիսան	»	16. Նուրեան Յովհաննէս	»
7. Կիւլպենկեան Սերգիոն	»	17. Լուսեան Յովհաննէս	»
8. Մազաուտեան Աւետիս	»	18. Մամեան Միքայէլ	»
9. Ոսնճեան Աբրիկ	»	19. Ֆրէնկեան Յակոբ	»
10. Թէրէստեճեան Պետրոս	»	20. Գաբակիոզեան Գրիգոր	»

Զ.

Տեղեկութիւն նահանգաց նատին մէջ պատրաստուած ուղերձին վրայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Անցեալ շաբաթ. թի առաւ ժողովոյս բրած որոշմամբ կարդի նրատին որոշմանը համեմատ Վեհափառ Կայսեր մատուցանելի ուղերձին պատրաստ բլլալը գիտէր, նմանապէս գիտէր որ նոյն օրը Սրբազան Պատրիարք Հօր յանձնուեցաւ բանակցիլ սակրութեան նախարարաց հետ որոշելու համար թէ երբ և ինչպէս մատուցուի նոյն ուղերձն Վեհ. Կայսեր։ Եթէ այս մասին ժողովը կհաճի տեղեկութիւն առնուլ, կիրաւիրեմ Սրբազան Հայրը ժամարիւ մեզ տեղեկութիւն տալու։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱՊԱՀ.— Ուղերձի մասին Բարձր. Մեծ Եպարքոսին հետ բանակցելով անմիջապէս սա պատասխանն ընդունեցի թէ Կայսրը շատ յոգնած է, ուղերձն ինձ զրկեցէք որ մատուցանեմ՝ Ներին Վեհափառութեան. և երբ յայտարարեցի թէ ազգային երեսփոխանութեան փափաքն է իւր կողմէ կարգեալ յատուկ պատգամաւորութեան մը ձեռօք մատուցանել զայն, այն ատեն՝ թատրերգեալը հանդէպն եղբայր մեր բան։ Բայց չգիտեմ թէ արդեօք ուղերձը նախապէս ցոյց տալո՞ւ է մեծ Եպարքոսին։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Սրբազանին յայտարարութենէն կտեղեկանանք որ նախարարութեան կողմէ հաճութիւն տրուած է մեր ուղերձը սուր ընդ մէջ ածելու արարողութենէն ետև մատուցանել Վեհ. Կայսեր։ Գալով այն կէտին թէ արդեօք ուղերձը կանխաւ ցոյց տալ հո՞րկ է Նախարարութեան թէ ո՛չ, կարծեմ պատշաճ է ցոյց տալ զայն ԼԹԿ Բ. Եպարգան կամք յայտնէ տեսնել կանխաւ։

Է.

Տեղեկութիւն Նախաքննիչ դիւանաց առենապետաց ընտրութեան և տոյն դիւանաց համագումար ժողովով պատրաստած Քաղ. ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկին վրայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Պարտք կհամարիմ Դիւանին կողմէ տեղեկութիւն տալ ժողովոյդ թէ՝ վերջին թերթ նատի մէջ եղած որոշման համեմատ՝ Ներքնոյր Նախաքննիչ դիւանաց անդամներն անցեալ ուրբաթ օր հրաւիրելով գումարուեցան, և իւրաքանչիւր դիւան իւր առենապետն ընտրելէ ետև, դիւանական համագումար ժողով կազմելով, Քաղ. ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկը պատրաստեցին զոր դիւանս և Սրբազան Պատրիարքն ընդունեցինք, և այս ցանկը տալէ առաջ՝ ամենուն հաղորդեցինք հրաւիրագրոյ հետ։ Երբ կարդը գայ, այս ցանկին վրայ պիտի կատարենք Քաղ. ժողովոյ ընտրութիւնն ինչպէս որ Օրէնքդն է պարտն։

Այս ըսելով Առենապետ փոխան՝ ժողովին

21. [illegible] Յովհաննէս »
22. Ալբանեան Մանուկ »
23. Խանասանեան Յակոբ պէյ
24. Մանուկեան Յարութիւն »
25. Հաճեան Խաչատուր »
26. Քալօլեան Ալեքս »
27. Տ. Եղիազարեան Մելքիսէդ »
28. Միւհենտեսեան Մկրտիչ »

Ուրբաթ 28 Մայիս 1876 'ի խորհրդարան Ղալաթիոյ որոշեալ ատենապետաց դիւանին մէջ։

[Ստորագրութիւնք]

Պ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Զեռնհասութեան դիւանի ատենապետ
ՑՈՎՀ. ՓԱՆՑ. ՄԿՐԵԱՆ

Կալուածոց դիւանի ատենապետ
ՅԱԿՈԲ ՓԱՇԱՇԵԱՆ

Համարակալութեան դիւանի ատենապետ
Ց. ՄԷՐԻԷՄ-ԳՈՒԼԻ

Իրաւասութեան դիւանի ատենապետ
Ներսէս Վարդապետի համար
Ն. ՓԱՇԱՇԵԱՆ

Ընտրութեան դիւանի ատենապետ
ՌՈՒՍԻՆԵԱՆ

Խմբագրութեան դիւանի ատենապետ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ա.ԺՂ. Ժողովոյ Ատենապետ
Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Բ.

Ֆեղեկութիւն Եկեղեցական Հանգուամայ Ժողովոյ պատրաստելիք կը բան. Ժողովոյ ընտրելեաց եռապատիկ ցանկին վրայ։

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կրան. Ժողովոյ ընտրեալ եաց եռապատիկ ցանկին պակաս, Մայր դիւանն պաշտօնապէս հաղորդուած չէ ոչ ոք ցանկը՝ զոր Եկեղեցական Հանգուամայ Ժողովոյ պարտաւորութիւնն էր պատրաստել ըստ սահմանադրութեան, ի չգէպ որ վերջնեներ նոսին Սրբազան Պատրիարք Հոր յանձնարարութիւն եղած էր Մայր դիւանի կողմէն. ուստի կը հարցնեմ Սրբազան Հոր թէ ուր է կրան. Ժողովոյ ընտրելեաց ցանկը։

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՒԱՏԱՔ. — Իմ քովս է ցանկը բայց թերութիւն ունենալով այսօր չպիտի կրնամ ներկայացնել զայն Ժողովոյ. այլ յաջորդիկոյ շաբթուն մէջ նորէն Եկեղեցական հանգամանաց համար Ժողով պիտի գումարեմ ցանկին թերութիւնը լրացնելու համար։

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Օրակարգին շենք հետեւիր կոր. ըստ օրակարգին առաջին է Աղթամարայ խնդիրը. մինչդեռ Դիւանն այս Ա. խնդիրը թողլով՝ Բ. խնդրոյն՝ այն է Վարչական Ժողովոյ ընտրութեան ցանկերուն վրայ կխոսի։

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կ'խաղիք, Ալաճաճեան էֆէնտի. Դիւանը տակաւին Օրակարգի խնդրոյ և ոչ մէկին չէ անցած. դեռ առենական գործոյութեանց մէջ ենք. իսկ Վարչական Ժողովոյ ընտրութեան ցանկերուն համար եղած խօսքը՝ միայն անցեալին վրայ տեղեկութիւն տալու համար է Ժողովին։

Գ.

Ֆեղեկագիր Երուսաղեմական շնորհանց

ԱՅԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բերայի և Գալատիոյ միացեալ թաղից պակասած երեք երեսփոխանոց տեղ նոր ընտրութիւն կատարուած և ընտրեալներն տեղեկագրին նոյն միացեալ թաղից ընտրողական Ժողովէն առ Սրբազան Պատրիարքն հասած և Նորին Սրբազնութեան ստորագրութեան ծանօթագրելն այսոր Դիւանին մատուցուած է, զոր Ժողովոյդ կը ներկայացնեմ.

Ա.

Բերայ և Գալատիոյ միացեալ թաղից Ընտրողական Ժողովոյ տեղեկագիրը։

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր։

Բերայի հրաժարեալ Երեսփոխանոց Վոսեմ. Օտեան Գրիգոր և Մեծ. Աղաբէկեան Մարկոս էֆէնտիներու և Գալատիոյ փոխանակեալ Երեսփոխան Գրիգոր Թորոս Պէյի տեղ նոր ընտրութիւններ միացեալ կատարելու համար Ձերդ. Բ. Սրբազնութեան վերջին 19 Ապրիլ 1876 և 704 թուականաւոր հրաւէրներին համեմատ թաղ. Խորհուրդս իր թուական վրայ գաղտնի քուէարկութեամբ և ընտրողութեան իրաւունք և հանգամանք ունեցող թաղեցի երեք անձինք ալ աւելցնելով Ընտրողական Ժողով կազմեց։

Ընտրողական Ժողովս ընտրութեան վերաբերեալ բոլոր նախապատրաստական գործողութիւններն ըստ օրինի կատարելով գաղտնի քուէարկութեամբ եռապատիկ թուով ընտրելեաց ցանկ պատրաստեց. և ընտրողաց ցանկն ալ լուսամբ դիտողութեան առնելով ըստ սահմանադրութեան ընտրելութեան իրաւունք ունեցողներն որոշեց և ըստ այնմ այս ու բնի կարգաւ ընտրողաց ցանկը պատրաստեց. Նոսա Գալատիոյ - փաշայի երեսփոխանական ընտրողաց ցանկերն ուղղելով միացուց թաղիս ցանկերուն հետ, զորս քուէարկութենէն ութ օր յառաջ թաղիս բոլոր եկեղեցեաց բակերն 'ի տես Ժողովրդեան առկախ թողուց մասնաւոր ծանուցմամբ յեկեղեցիս. նոյնպէս ընել տուաւ Գալատիոյ - փաշայի Թաղ. Խորհրդոյ ալ. մասնաւոր ծանուցագրով մը հրաւիրելով զընտրողս եթէ ունին ընտրողաց և ընտրելեաց ցանկերուն նկատմամբ իրենց դիտողութիւնն ներկայացնեն մինչև 'ի բակարկութեան որոշեալ երեկոյ, և իբր նախապատրաստութեամբ յագդպին լրագիրս ազդարարեց ընտրողաց իրենց պարտաւորութիւնն և քուէարկութեան որոշեալ օրն ու ժամը։ Այլն նայելն ինչ որ հրաւանգը կը տրամադրէ։

Մայիսի 9 ին կիրակի առաւօտ 'ի ներկայութեան Նախագահի Ընտր. Ժողովոյ և ամենց թաղեցւոց բուէտուփը բանալով փակուեցաւ և կնքուեցաւ. և ըստ ազդարարութեան ժամը մէկին քուէարկութիւն սկսաւ և տեւեց մինչև ցժամ մէկ, որ որոշեալ ժամանակն ժամ մ'աւելի էր. վասն զի ընտրող. Ժողովս նկատելով որ Գալատիոյ - փաշայի ընտրողք թաղիս հեռի են, որոշեց ժամ մ'ալ աւելի միջոց տալ. բուէտուփն կնիքներն քննելն յետոյ անմիջապէս զայն բանալով 'ի ներկայութեան մէկ քանի ժամ զմրրոց քուէհամարի զործողութիւնք սկսան, և ընտրողաց տասերին ստորագրութեանց հետ ընտրողաց տասերին ստորագրութեանց հետ ընտրելիներն բաղդատելով ճիշտ գտաւ, և տեսաւ որ 280 քուէարկուներէն միայն 40 հոգի մասնակցեր են, յորոց 32ը անձամբ և 8ը նամակաւ։ Հետեւաբար քննիչներ կարդելով քուէից ընթերցումը սկսաւ, այս միջոցին գալատիոյ - փաշայի ընտրողաց կողմէն պահանջուաւ քուէ եկաւ որ ըստ ասից Նամակարերին վեց քուէ է եղեր. Ընտրող. Ժողովս ասանց պահանջը բանալու անընդունելի գտաւ ըստ հրաւանգին։

Քուէիցն ընթերցանէն և անոր պարտնակութիւնը գտնուելէն յետոյ քննիչք զայն բաղդատեցին, որոց արդեամբ և բացատրակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցան

Մեծ. Խիրս	էֆ Զայեան	քուէ	34
» Յարութիւն	» Ղարասունկ	»	34
» Գրիգոր	» Մարկոս	»	31

Որոց երկուքին սոյն պաշտօնը ընդունած լինելնուն հաճութիւնը իրենց ստորագրութեամբը ապահովեալ. իսկ միւսը Գրիգոր էֆ.նտի Մարկոսեան գործով Պոլիսէն բացակայ լինելուն նոսա հաճութիւնը չէ կրցած առնուիլ։

Ապասին, այսպէս ամենայն օրինաւորութեամբ և ճշգութեամբ քուէարկութիւնը աւարտեցաւ առանց օրինաւոր դիտողութեան, զոր

Ներկայիս տեղեկագրելով Ձերդ Բ. Սրբազնութեան Ի տնօրէնութիւն։

Մնամք խորին յարգանօք և ակնածութեամբ

Միացեալ Թաղից Ընտր. Ժողովոյ

17 Մայիս 1876 ՆԱԽԱԳԱՀ

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴՊ ԱՐՍԼԱՆԵԱՆ

Ք. Բեռայի

ԱՏԵՆԱԳՐԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Ց. ՊԵՏՐՈՍԵԱՆ Ն. ՓԱՍԱՍԵԱՆ

Ց. ԱՃԱՐԵԱՆ Ց. Բ. ԹԱԳԻՈՐԵԱՆ

Ց. Վ. ՏԱՎՈՒՏԵԱՆ Բ. ՂԱՍԱՐՈՍԵԱՆ

Բ.

Պատրիարքական պատգամաւորեան ժանուցագիրը։

Վեհափայլ Առաջնորդաց Փաշա Ազգային Երեսփոխանական Ժողովոյ

Ազգային Ժողովն պակաս Բերոյ և Գաղբմ-փոշա միացեալ Թաղից Հրեք երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնք կատարուելով՝ և տեղեկագիրն Ընտրող. Ժողովոյն կազմէ հասած ըլլալով. Պատրիարքարանս քննեց ընտրելոց պահանջագրական հանգամանքը և Սահմանադրութեան համեմատ գտաւ։

Ահաւասիկ յիշեալ նորընտիր երեսփոխանաց անուանքը։

Մեծ. Գրիգոր Էֆենտի Մարկոսեան
» Եղիազար » Զաչեան
» Յարութիւն » Նորատունկեան

Հարկ կը համարիմ նաև յայտնել բատեղեկագրոյ Ընտրող. Ժողովոյն թէ՝ վերոյիշեալ ընտրելոյ մէջէն միայն Մարկոսեան Էֆենտիի յանձնառութիւնն իր Պոլսէն բացակայ գտնուելուն պատճառաւ անաւարտ մնացած է. իսկ մնացեալ երկու քին յանձնառութիւնն ապահովուած է արդէն։

Ազգ՝ յիշեալ միացեալ Թաղից Ընտրող. Ժողովոյ տեղեկագիրն ապն ծանօթագրոյս հետ մտուցանելով Ազգային Ժողովոյդ 'ի փափաքայուն։

3 Յունիս 1875 Մնամ ողջագրար

Ի Պատրիարքարանի Հայոց Պ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔ.

Կ. Պոլսոյ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ցեռ ընթերցման Ազգային Փաշան հրաւիրեց երեսփոխաններն՝ որ սոյն ընտրութեան պարագաներուն վրայ դիտողութիւն եթէ ունին՝ ընեն. և տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ, անմիջապէս քուէի ենթարկեց, և Ժողովին միամտոյն հաւանութեան վրայ՝ երեսփոխան հռչակեց

Գրիգոր Էֆենտի Մարկոսեան
Եղիազար » Զաչեան
Յարութիւն » Նորատունկեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գոհանալեան Մինաս Էֆենտիի կողմէն այսօր Դիւանին տանողուած հետեւեալ 2 գրաւոր առաջարկութիւնները կը ներկայացնեմ Ժողովին։

Ա.

Վեհաշուք Առաջնորդաց Փաշա Ազգային Ժողովոյ

Նկատելով որ դատական գործոց համար յատուկ ազգային օրէնք մը և դատարան չ'կան, երբեմն ազգայնոց կողմանէ բոլոր ու գանգատը նախ տեղի կ'ունենան։

Նկատելով որ այս մասին եղած բողոքներն ու գանգատներն իրաւացի և արդար են։

Ուստի դատական գործոց և ամուսնական դատերու համար խմբագիր խառն յանձնաժողով մը կ'առաջարկեմ, որ իր պաշտօնն ուսումնասիրէ նաև իւր աշխատութեան արդիւնքը ներկայացնէ Ազգ. Ժողովոյ 'ի վաւերացումն։

4 Յունիս 1876 Ազգ. Երեսփոխան

Ազգ. Խորհրդարանի ՄԻՆԱՍ ԳՈՀԱՄԱՃԵԱՆ

Բ.

Վեհաշուք Առաջնորդաց Փաշայ Ազգային Ժողովոյ

Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան առթիւ հետեւեալ բարեփոխութիւնները կ'առաջարկեմ.

1. Այն անհատ՝ որ ըստ չափու ազգային տրոց կը մասնակցի, 21 տարին լրացուցած է, և գրել ու կարդալ գիտէ, ընտրող է երեսփոխանութեան։

2. Երեսփոխանաց ընտրութիւնքն ընդհանուր քուէարկութեամբ կը կատարուի, և եկեղեցականք ու աշխարհականք անխտիր կը մասնակցին ընտրութեան։

3. Հանրագումար Ժողովը կը գումարի միայն զուտ կրօնական խնդրոց համար և կը բաղկանայ Պոլիս գտնուող եպիսկոպոսներէ և կրօնական հմտութիւններն վկայեալ եկեղեցականներէ ու աշխարհականներէ։

4. Դոնէ երեք տարի դատական մը մէջ առաջնորդական պաշտօն վարող, հաստատակաց սիրոյն և վստահութեան կնիքը կրող, ազգին վիճակին և եկեղեցւոյ ու տէրութեան օրինաց քաջահմուտ եպիսկոպոսներէ ու վարդապետներէ կ'ընտրուի պատրիարք ըլլալու անձը։

5. Դատական առաջնորդները կ'ընտրուին Դ. յոդուածին պայմաններն յանձին կրող եպիսկոպոսներէ, վարդապետներէ ու քահանաներէ։

4 Յունիս 76 Ազգ. Երեսփոխան

Ազգ. Խորհրդարանի ՄԻՆԱՍ ԳՈՀԱՄԱՃԵԱՆ

Ցեղեկութիւն Օրակարգի խնդրոց դատակարգութեան վրայ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգին անցնելէ առաջ հարկ կ'համարիմ անոր պարունակած խնդրոց դասաւորութեան վրայ կարճառօտ տեղեկութիւն մը տալ երկար խօսակցութեան տեղի չտրուելու համար. անցեալ նիստին վերջը օրակարգի խնդիրները դասաւորելու ժամանակ ամենէն առաջ Վարչական Ժողովոյ ընտրութեան խնդիրը դրի, և Ազգանուագ խնդիրը չորրորդ դրեցի օրակարգին մէջ. բայց վերջը լրագրաց հրատարակութենէն և մեր հրաւիրագրերէն տեղեկացայ որ Ազգանուագ խնդիրն առաջին կարգը բարձրացեր էր. այս առաւօտ քննեցի և խնայեցայ որ սոյն փոփոխութիւնն նոյն ինք Սրբազան Պատրիարք Հայրն ըրած է իր գրչով՝ հարկաւ. Նորին Սրբազնութիւնն ստիպողականութիւն մը նշմարելով փոփոխել ուզած է այսպէս օրակարգին խնդրոց դասաւորութիւնը։ Եթէ Ժողովն ալ Ազգանուագ խնդրոյն ստիպողականութիւնը կընդունի, նախ անկէ կսկսինք և հետզհետէ կշարունակենք միւս խնդիրները։ — Թօսրն Եւսուփեան էֆէնտին է։

ԵՈՒՍՈՒՓԵԱՆ Ց. ԷՖ. — Որովհետև Նախագահ Սրբազան Հայրն է որ նախնականութիւն տալ ուզեր է Ազգանուագ խնդրոյն, իբրև կարևորագոյն քան զայլ ամէն խնդիր, որոյ համար և յեղաշրջելով օրակարգն՝ առաջին ըրեր է նոյն խնդիրը, պէտք է ըստ իս՝ նոյն ինք Նորին Սրբազնութենէն խնդրել նախ ասոր պատճառը, և ապա եթէ Ժողովն ալ ստիպողականութիւնը տեսնէ, ըստ այնմ անցնի անմիջապէս նոյն խնդրոյն։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ազգանուագ խնդրոյն կարևորութիւն տուողն միայն ես չեմ, այլ այս միջոցիս Վանէն հետզհետէ եկած ստիպողական հեռագրերն են, որք կիմացնեն թէ Ազգանուագ Տեղապահ Գակոբ եպիսկոպոսն կապանեն եղեր, գնտակն անոր քղանցքէն անցեր և ուրիշ վարդապետ մը ապաններ է։ Այս յաւելի դէպքին վրայ Թաշտուր կաթուղիկոսն ալ թախանձեց զիս՝ որ շուտով վախճան մը տանք Ազգանուագ խնդրոյն։

ԵՈՒՍՈՒՓԵԱՆ Ց. ԷՖ. — Քանի որ Սրբազան Նախագահն անձնապէս կարևորութիւն չէ տուած այլ դէպքը բերեր է որ կարևորութիւն տրուի, և այդ դէպքն ալ Վարչական խնդրոյ մասնաւորութեան կարօտ խնդիր մ'է, իբրև Վարչական պարզ խնդիր մը նկատելով կարևորութիւն մը չեմ տեսներ այս պարագային մէջ անցապաղ Ազգանուագ խնդրով զբաղելու։ Այլ յուսալ քան զայն կարևոր կը դատեմ որ մեզ մեր Վարչական Ժողովոյ ընտրութեան խնդրոյն այսօր զբաղինք և ընենք։ Եթէ նոր վարչութիւնը գայ, ան ատեն թող յայտնէ մեզ՝ մինչև ո՞ր ատենան պիտի դրպի Ժողովն Ազգանուագ

խնդրոյն հետ, այս ալ նկատելի կէտ մ'է։

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. Ե. — Ոչ միայն Աղթամարայ մէջ պատահած այդ վերջին սպանութեան անցքը, այլ նաև անցեալ ոչ նուազ յաւալի դէպքերը և տառապանքները երբէք չեն ներեր՝ որ Աղթամարայ խնդրոյն կարևորութիւնը չզգանք։ Սրբազան Հայրը վերջին դէպքը միայն կիրչատակէ, որուն մէջ մի միայն մէկ անձի մը սպանման վիճակը կհրաւիրէ զմեզ ի կարեկցութիւն, իսկ անդին Աղթամարայ մէջ ո՞րչափ բիւրաւոր հայեր կան՝ որոց դառնագոյն վիճակն առաւել պէտք է զմեզ ի կարեկցութիւն և ի գթութիւն շարժել. մանաւանդ որ Աղթամարայ խնդիրն այլ ևս ընցած և աւարտած խնդիր մ'է թէ մեզ համար, թէ Բ. Դրան համար և թէ վիճակային ժողովրդոյ համար, ուստի առանց սպասելու պէտք է յանձնենք Սրբազան Պատրիարքին անմիջապէս գործադրութեան համար։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կարչեմ զգուշանանք խնդիրը հապազելէն. որովհետև այս վայրկենիս Աղթամարայ խնդիրը ըսելու վրայ չէ գործը, այլ անոր նախադասութիւն տրուելուն վրայ. Սրբազան Հայրը բացատրեց իւր կողմէ Աղթամարայ խնդիրն օրակարգին գլուխն անցնելուն պատճառը. իսկ Եւսուֆեան էֆէնտի անոր կարևորութիւնը ժխտեց և կարծիք յայտնեց թէ Վարչական ժողովոյ ընտրութիւնն առաւել կարևոր է. այս կէտն է որոշման կարօտ, ասոր վրայ պէտք է խօսիլ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է. — Սրբազան Պատրիարքը բացատրել պարտաւոր էր թէ Աղթամարայ խնդիրը նորէն հոս բերելու ի՞նչ հարկ կայ։ Այս բացատրութիւնը չտուաւ։ Իսկ Եւսուֆեան էֆէնտիի դալով՝ նա չըսաւ թէ Աղթամարայ խնդիրը բացարձակապէս կարևորութենէ զուրկ է, այլ իրրև վարչական գործ նկատելով՝ անոր լուծումը Վարչութեան կվերաբերի ըսել ուզեց։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փափազեան էֆէնտի, դուք ալ միևնոյն մեղքը կգործէք։ այսինքը խնդրէն կերպով մը կշեղիք՝ ինչպէս չեղեցան մեր առանձին էֆէնտիները. վասն զի հիմայ խորհրդածութեան կարգն այն չէ թէ արդեօք Աղթամարայ խնդիրը ասոր լուծելու կամ թէ Վարչութեան դրիչը՝ ուշ, այլ պէտք կայ միայն հանկնալու և որոշելու թէ առաջ՞ խնդիրը պիտի նայինք, առաջ Աղթամարինը՝ թէ ոչ վարչական ժողովոյ ընտրութիւնը, չմոռանանք որ Աղթամարայ խնդիրն օրակարգին մէջ ես յորորդ խնդիր դրած էի, իսկ Սրբազան Պատրիարքը փոխեր և առաջին խնդիր ըրեր է զայն։ Մեզի ըսէք միայն՝ որն առաջ պիտի նայինք։

Բազմաթիւ Ձայներ — Գրէ, գրէ։

Տ. ԵՂՇԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ. — [կարդալով ներկայացման [. Նստի [տենագրութեան 9դ երեսին մէջ գտնուած [Աղթամարայ խնդրոյն վրայօք Սրբազան Պատրիարք Հօր և [տենագիտ փաշայի մէջ եղած խօսակցութեան մասը] Դուք Աստենապետ փաշա, երբ Սրբազան Հայրն Աղթամարայ խնդրոյն վրայօք դանդն եկած վերջին պատասխանագիրն օրակարգին անցնելէ առաջարկած է, պատասխանած էք թէ՝ օրակարգն անցնելու կարօտութիւն չունի, այլ ատենական գործողութեանց կարգին մէջ տեղիք խնդիր մ'է։ Զայս ըսելէ ետև դարձեալ օրակարգին մէջ անցուցած էք. Աղթամարայ խնդիրն։ Ես զայս դիտել տալով՝ Ձեր վսեմութեան ուշադրութիւնը կխնդրեմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ ամենն ես ըսելէս ետև դարձեալ Ժողովը որոշեց որակարգին մէջ անցնել Աղթամարայ խնդիրն. իսկ Սրբազան Պատրիարքը փոխեց և առաջին խնդիր ըրաւ զայն։ Այժմ քուէի կդնեմ նոյս, ո՛վ որ Աղթամարայ խնդիրն առաջին ընել կուզէ իրրև նիւթ ժողովին խորհրդածութեանն ու վիճաբանութեանը, ձեռքը վեր վերցնէ։

23 Ցեռք բարձրացան ընդհանուր

Սրբազանով հանդերձ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երկրորդ՝ քուէի կդնեմ, անոր հակառակ ո՛վ որ Վարչական ժողովոյ ընտրութեան խնդիրն առաջին ընել կուզէ, ձեռքը վեր վերցնէ։

25 Ցեռք բարձրացան հակառակ առաջնոյն

Հետևապէս՝ ժողովը 23 ձայնից դէմ 25 ով ՈՐՈՇԵՑ Աղթամարայ խնդիրն ետ ձգել և առաջին խնդիր ընել Վարչական ժողովոյ ընտրութիւնը։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Որպէս զի չկարծուի թէ ես Աղթամարայ խնդրոյն կարևորութիւն չեմ տուած, հարկ է ինձ կրկնել թէ պարտաւորութիւնս էր կարևորութիւն տալ, և այնչափ, մինչև ասիպուիլ հոս Աղգին զերազոյն առաջնորդը բերել այս խնդիրն։ Որովհետև բազմաթիւ ժողովուրդ կայ Աղթամարայ վիճակին մէջ, որք սկսած են զոհ երթալ. ո՞ր խղճմտէր և անշահախնդիր Պատրիարք կրնար առանց ազգին հարցնելու առանձկ կնճռոտ խնդրոյ մը գործադրութեան ձեռք զարնել. ի՞նչ ըսել է այս՝ որ մէյ մը Աղգային ժողովէն Վարչութեան և մէյ մ'ալ Վարչութենէն Աղգային ժողովին կձգձգէր։ Պարզապէս ըսեմ ձեզ, ես կվախնամ ինքնին և Վարչութեան շրջանին մէջ միայն վերջին կարգադրութիւնն տալ այս խնդրոյն, որպէս զի չըսուի թէ մարդասպան մը Կաթուղիկոս դրեր ենք, ինչպէս որ պարբերական թերթերէն ամանք հրատարակել սկսած էին։ Անոր համար հոս բերի, Աղգը ներկայացնող ժողովին, և հարցուցի թէ Բ. Դրան գիրը բաւական է անպարտ հռչակել Խաչատուր կաթուղիկոսն, այս հարցումս այսմ կամ ոչ, պատասխան մը կտրուէ ժողովէդ։ ինչո՞ւ կտատանիք այդ պատասխանը տալու։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սոյդ է Սրբազան Հայր, որ ժողովս Ձեր Սրբազնութեան այդ հարցման ուղղակի այսմ կամ ոչ պատասխան տալ հարկ չը դատեց, բայց խնդիրը ասրուամ վիճակի մէջ ալ չը ձգեց. այլ Վարչութեան յանձնարարեց ծանուցանել Բ. Դրան՝ Եկեղեցական Համագումար ժողովոյ կատարած դատաւորական գործողութիւնը, և հարցուցեալ թէ պրպտօք Բ. Դուռն այն վերջին գործողութիւնն բաւական կը համարի՞ Խաչատուր Կաթուղիկոսի ամբաստանական խնդիրն խապտ գոցուած նկատելու։ Թէ որ Դուռն առ այս պատասխանէր թէ բաւական կը համարի գործը վերջացած նկատելու. Վարչութեան կը մնար անհրաժեշտ Խաչատուր Կաթուղիկոսի գործը կնքել, իսկ թէ որ հակառակը պատասխանէր. այնուհետև Դրան կը մնար դատաստանական օրինաւոր գործը լրացուցանել։ Այսպէս էր ասասիկ ժողովոյս նախընթաց որոշումն Աղթամարայ խնդրոյ մասին։ Այս որոշման համեմատ Վարչութիւնը գրեր է Բ. Դրան և պատասխանագիր մը ստացեր է, զոր այս ամսամ Ձեր Սրբազնութիւնը ժողովոյս կը ներկայացնէ. իսկ ժողովս առանց սակաւին խնդրոյն մէջ մտնելու, անոր առաջնութիւն տալ յուզից և Վարչական ժողովոյ կազմութիւնն առաջին խնդիր ընել որոշեց։ Կը մնայ այժմ Աղթամարայ խնդրոյն կարգն ալ որոշել. ժողովը կը հարցնի՞ արդեօք Վարչական ժողովոյ ընտրութենէն ետք անմիջապէս այն խնդիրն երկրորդ ընել և խորհրդածութեան ու վիճաբանութեան տակ ձգել։ Այս կէտն ալ քուէի դնեմ. ո՛վ որ կընդունի Աղթամարայ խնդիրը Վարչական ժողովոյ ընտրութեան գործէն ետքն անմիջապէս երկրորդ խնդիր ընել, ձեռքը վեր վերցուցէ։

Ժողովն ընդհանուր քուէով ընդունեց և ՈՐՈՇԵՑ Վարչական ժողովոյ ընտրութենէն ետև անմիջապէս Աղթամարայ խնդրոյն անցնիլ։

Այսպէս Ատենապետ Փաշան Ատենական գործողութիւնքը կնքելէ ետև, ժողովին որոշման համաձայն Օրակարգին Ա. խնդիրը ձեռնառաւ, որ է Ընտրութիւն Վարչական Ժողովոյ։

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

Ընտրութիւն Վարչական Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում Սրբազան Պատրիարք Հօր յայտարարութենէն իմացանք՝ որ Կրօն. ժողովոյ ընտրելեաց ցանկն այսօր պատրաստուած չէ. ուստի չենք կարող այսօր Կրօն. ժողովոյ ընտրութիւնը կատարել, և կանցնինք ուղղակի Քաղ. ժողովոյ ընտրութեան

ձեռնարկել։ Այն ընտրութիւնն՝ ինչպէս որ յայտնի է, Նախագահ Դիւանոյ Ատենապետտայ ժողովին ձեռօք պատրաստուած վերջնական ցանկին վրայ պիտի կատարուէր. բայց կանոնի այդ ցանկը նախ իր ամբողջութեամբը քուէի կը դընեմ։

Զայս ըսելով Ատենապետ Փաշան «Քաղ. ժողովոյ ընտրելեաց ցանկն ամբողջապէս քուէի դրաւ, զոր ժողովը 29 ձայնից մեծամասնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ։

Փափազեան Սահակեան էֆ. այն քուէարկութեան պահուն ձեռնարկ գտնուիլը յայտնելով՝ խնդրեց Դիւանէն այս պարագայն նշանակել ատենագրութեան մէջ։

Ատենապետ Փաշան՝ ծանուցանելով որ այս միջոցին ներկայ երեսփոխանաց թիւն 60ը անցած է, և «Քաղ. ժողովոյ ընտրութեան քուէհամարը 3 ժամու գործ է, այս գործողութեան առթիւ ժողովն ընդերկար չսպասցնելու համար առաջարկեց և ժողովն ընդունեց՝ որ մէկ կողմէ քուէհամարի գործողութիւնը շարունակուի ընդ հսկողութեամբ քննչաց, և միւս կողմէ ժողովն անարգել Օրակարգին միւս խնդիրները յառաջ վարէ։

Հետևապէս քուէարկութիւնն սկսաւ, և քուէհամարի քննիչ կարգեցան վիճակաւ

Հովուեան Ղազարոս էֆէնտի
Մինասեան Տիգրան »
Արապեան Սարգիս »
Աճեմեան Գրիգոր »

Երեսփոխաններէն՝ Նուրեան և Փափազեան էֆէնտիները քուէարկութեան պահուն դուրս ելած ըլլալով, անուանական կոչման չը պատասխանեցին։

«Քուէարկութեան աւարտմէն ետև, որում մինչ 59 երեսփոխան մասնակից գտնուած էին, քուէհամարի գործողութիւնը քննչաց յանձնուեցաւ առանձինն կատարել, արդիւնքն ի վերջոյ Դիւանին միջոցաւ ժողովին հրատարակուելու պայմանաւ. իսկ ժողովն անցաւ անմիջապէս Աղթամարայ խնդրոյն, որ յաջորդ խնդիրն ըլլալ որոշուած էր արդէն։

Բ.

Պատասխանագիր Բ. Դրան Աղթամարայ խնդրոյն համար

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արդէն յիշեցուցի ժողովին՝ Աղթամարայ խնդրոյն վրայ մեր վերջին որոշումը։ Կ'ուզեմ Սրբազան Հօր մեզ բացատրել թէ ի՞նչ է իր դիտումը այն խնդրոյ վրայ Բ. Դրանէն ընդունած վերջին պատասխանագիրը մէջ բերելով»։

Այս միջոցին՝ բազմաթիւ երեսփոխանաց խնդրելովը՝ կրկին անգամ կարդացուեցաւ Դըրան պատասխանագրոյն թարգմանութիւնը (Տե՛ս վերջիններ նաև Ատենագրութեան 16րդ երեսը)։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Դուք ինչ որ Բ. Դրան հարցնել որոշած էիք. և մեր հարցուցինք, մինչդ անոր պատասխանն է եկածը. Ժողովդ հրամայեց որ Դրանէն գալիք պատասխանը հոս բերեմ, և ես ալ նոյնն այս խնդիրը հոս բերի։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Հայր, եթէ չեմ սխալիր, ժողովս այն ատեն Բ. Դրան գրութիւնք և հարցումներ կէտերն որոշելով՝ Ձեզ և Վարչութեան ժողովոյ յանձնեց՝ որ եթէ Դուռն ալ բաւական դատէ, ըստ այնմ պէտք եղածը գործադրէք. ես չեմ յիշեր որ ժողովը Դրանէն ընդունուելիք պատասխանագիրն կրկին այս ատեանը բերելու յանձնարարութիւն ըրած ըլլայ։ Հիմա ի՞նչ կը հարցունէք մեզ Ձեր Սրբազնութիւնը։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես կը հարցնեմ այժմ թէ այս վերջին գիրն՝ որ Բ. Դրանէն եկած է մեզ, բաւակա՞ն է արդեօք Խաչատուր Կաթողիկոսի անպարտութեանը համար։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն խնդիրը սա կէտին վրայ կը կայանայ թէ՝ արդեօք Դրան այս վերջին գիրը բաւակա՞ն է Խաչատուր Կաթողիկոսի անպարտութիւնը հաստատելու. այս տեսակէտով վիճաբանութիւնը բացուած կը հրատարակեմ։ — Խօսքն Եուսուֆեան էֆէնտիին է։

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Յ. ԷՖ. — Եթէ լաւ կը յիշեմ, երբ ժողովս այն նստին մէջ, յորում վերջին անգամ Աղթամարայ խնդիրը յուզուեցաւ, Վարչութեան յանձնեց թագրիր մը գրել այս խնդրոյն վրայով, ուրիշ չարժանիմ կամ նպատակ չունեցաւ, Խաչատուր սրբազանի կաթողիկոսութիւնն ընդունելու մասին խնդիր չը կայրոյ, այլ միմիայն առ կէտն իր խորհրդածութեան առարկայ ըրաւ թէ ըստ որում ամբաստանութեան ենթակայն եկեղեցական բարձրաստիճան անձ մ'է, արդեօք ամբաստանութեան արատը ջնջուած էր անոր վրայէն, ժողովն այնպէս կարծեց թէ Դրանէն եկած առջի թէզքէրէին մէջ այս կէտը մթութեան տակ մնացած է, այնպէս որ Դուռը կրնար իրեն իրաւունք տալ օր մը Վարչութեան ըսելու թէ որչափ ալ դուք Խաչատուր կաթողիկոսն անպարտ դատելու ըլլաք՝ մեր այդ մասին գրուցիկք չունենալնիս ըսած ենք ալ նէ, այսու ամենայնիւ խնդիրն եթէ պէտք ըլլայ՝ կրկին անգամ ձեռք առնուելու կարելի ըլլալը կը նշանակէինք։ Խնդրոյն այս աղօտ վիճակը լուսաւորելու և յստակելու նպատակաւ ժողովս կողմանէ որոշուած վերջին թագրիրը գրուեցաւ եւ, հիմա պատասխանագիր մը կուգայ Արտաքին գործոց Բարձր. պաշտօնէին կողմէ, յորում կըսէ թէ՝ «ինչպէս որ Ձեր Սրբազնութեան գրութեան իմաստը կը յայտնէ, որ Խաչատուր սրբազան Պատրիարքարանի քննութենէն և երդմամբ ըրած յայտարարութենէն անպարտ երևցած է, նմանապէս աւելցած առաջ տեղական կառավարութեան ուղղուած գրութեան վրայ եկած պատասխանագրէն հասկցուած է որ Խաչատուր սրբազանին կասկածելի մասնակցութեան վրայօք վճիռ արձակելու բաւական ծայր մը չէ կրցեր առնուիլ։ Հետևաբար իրաց այս վիճակին մէջ եթէ Խաչատուր սրբազանին անպարտութեանը մասին Ձեր Սրբազնութիւնը համոզուի, Բ. Դուռն ալ ըսելիք չունենար, որոյ համար այս ծանուցմունքը գրուեցաւ ի գիտութիւն»։

Ըստ իս մասին աւելցայ Բ. Դրան կառավարութեան մէկ վերջնական վճիռն է. ես կը կարծեմ որ երբ ակնյութիւնն այսպիսի նամակ մը կը գրէ. այլ անկէ ես չկրնար առնել, ուստի Դրան այս պատասխանագիրն ըստ ամբողջման բաւական կը համարիմ. մէկ կէտ միայն կայ նկատողութեան արժանի, այն թէ այսպիսի պարագայներու մէջ մեր Պատրիարքարանի պաշտօնական յարաբերութիւնն արդեօք Արտաքին գործոց պաշտօնէի՞ն թէ ոչ Մեծ Եպարքոսին հետ է. եթէ յարաբերութեան միջնորդ միայն Արտաքին գործոց պաշտօնեայն է, լաւ. ապա թէ ոչ Մեծ Եպարքոսէն ալ այսպիսի պաշտօնագիր մը պէտք է...

ՁԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ, հարկ չկայ.

Ատոր մէջ իմ վնասել ուզած կէտս միայն յարաբերական ձևն է. տէրութեան և Պատրիարքարանի մէջ եղած յարաբերութեան ձևը. արդեօք բաւակա՞ն է Արտաքին գործոց պաշտօնէին կողմէ գրուած ըլլալն եթէ ոչ Մեծ Եպարքոսին կողմէ ալ գրուիլ պէ՞տք է մի...

(Ո՛չ, ո՛չ բնաւին հարկ չկայ)

Քանի որ այդպէս է, քանի որ Մեծ Եպարքոսին կողմէ ալ գրուելու կարօտութիւն չը տեսնուիր, ուրեմն այս նամակն իր ծայր գնելու է Վարչութիւնը և պէտք եղածը գործադրելու լմնցունելու է։

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ. — Համամիտ ենք Եուսուֆեան էֆէնտիի. քուէի դրուի։

ԵԱՂՃԵԱՆ Օ. ԷՖ. ինչպէս որ ամեն բանի հակառակ կողմն ալ մտածել պարտաւորութիւն մ'է, նմանապէս այս պարագային մէջ՝ քանի որ քուէարկութեան խնդիր կը լինի, հարկ է մտածել թէ երբ քուէարկութիւնը Խաչատուր կաթողիկոսի մերժման արդիւնքն պատահէ, միթէ այդ արդիւնքը պիտի ընդունի՞ Բ. Դրան գիրը պիտի ջնջուի՞. ինձ համար քուէարկութեան հարկ չեմ տեսներ։

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ես ալ քուէարկութեան հարկ չեմ տեսներ. վասնզի խնդիրն այս ժողովին չվերաբերիր, մեր Վարչական ժողովներ ունինք, միանգամայն Եկեղեցական Համագումար ժողով, սանք թէ՛ կրօնապէս և թէ՛ քաղաքականապէս քննած են արդէն այս խնդիրն իր բոլոր պարագաներովը, ուստի այս պատաս

խանգիկն ալ որ վերջին անգամ եկած է Բ. Դուռն, հարկ է յանձնել Վարչութեան խառն ժողովին, և կ'սաւզեմ որ արդէն խառն ժողովին ներկայացուած է և գիտակցութիւն մը չէ եղած. միայն գործադրութիւնը Ճեպած է. ըսել է որ գործադրութեան համար խառն ժողովին դարձնել պէտք է, որովհետև բան իւ հարկ չ'կայ հոս ոչ քննարկութիւն և ոչ որ և է գիտակցութիւն մը ընելու։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — Ազամանեան էֆէնտիի բաժներ եթէ ընդունելի ալ ըլլան, շատ ուշ Ճեպած են. փաստ դի ապրէն շատ մը վիճաբանութիւններ եղած և պատասխաններ եկած են հոս։ Բ. Դուռն ալ արշաւի որ անպարտ կ'քաշէ նէ՝ մեր թագրերին վրայ կ'ըսէ . . . :

ՁԱՅՆ ՄԸ. — Ոչ. տեղական կառավարութեան անգեկցութեան ալ խօսք կայ։

Այս միջոցին՝ ժողովականաց մէկ քանիին խնդրելովը Սպրօ էֆէնտի կարդաց Դուռն պատասխանագրին Ցանկերէն բնագիրը։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — (Ցարուեանկելով) Հիմա այս հանգամանքս զոյացեր է թէ և մեր Վարչութեան ժողովոյ մէջ, այսու ամենայնիւ գործնական այս ժողովին եկեր Ճեպեր է գործը. կերեւայ թէ կարգութիւն տեսեր են հոս գիտելու. արդեօք մեր նորէն Վարչութեան կրնա՞ք դարձնել. այ. որովհետև մեր գործէն տեղեկութիւն չունիք, չենք քններ՝ որ գիտնանք. Բ. Դուռն ալ այդպէս կ'ըսէ իւր բլգէրլենովն, քննութեան միջոցները պահեցան, որով բնութեան շարունակելն անկարելի եղաւ կրակ. այս խօսքերը բուսական կրնա՞ն ըլլալ ապագային մէջ խնդիրը շնորհելու և խաչաւոր եղիսկոպոսն քաղաքական տեսակէտ չփերակոչելու համար. եթէ նկատելի կէտ մը կայ բան մեզ այս է. գիտնալ թէ արդեօք այդ բէգպէրլենեան խնդիրը յաւիտենապէս կը գոցուի՝ թէ ոչ բաց դուռ մը կմնայ կոր. այս կէտն ալ մեզի չփերաբերիր. Վարչութեան քննելիք և գիտցիք բաներն է. Թող Վարչութիւնը նայի, թէ որ բաց դուռ մը Ճեպած չէ մնցնէ, իսկ թէ որ պակաս բան մը Ճեպած է Թող ամբողջացնէ և բաց դուռ չը թողու։

ԼՈՒՍՈՖԵԱՆ Ց. ԷՖ. — Իսկ Մէրեէմ-գուլի էֆէնտիի բաժը պիտի կրկնէի. խնդիրը ամբնցած է մեզի համար, կմնայ Վարչութեան՝ որ տարագային մէջ բաց դուռ մը չձգելու, և եթէ խնդիրը նորոգուելու բլլայ՝ բնաւ արժէք կամ կարեւորութիւն չպատեցնելու համար եթէ որ և իցէ բանի մը պէտք կամ կարօտութիւն կունենէ, 'ի գործ դնել. իսկ թէ որ եղածները բուսական կը տեսնէ և կարօտութիւն չտեսներ այլեւս նոր բան մ'ալ ընելու, կրմնայ։ Կիրչ՞ը, տակէ տառջ ըսինք որ եթէ Դուռն պատասխան գոյ թէ բուսական է, տեղական կառավարութեան լաւ գտնուած այն գաղափարն քննութեան վերաբերեալ թղթերը բերել տանք։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Տակաւին մէկ երկու առանձնարան կան՝ որք պիտի խօսին այս խնդրոյն վրայ, բայց անոնց խօսք տալէ առաջ հարկ կը համարիմ յայտնել թէ վիճաբանութիւնը հնդանեակ չեղեցաւ իւր սահմանէն. ստեղծուան էֆէնտիներդ խնդրին դուրս եկան. վասն զի վիճաբանութեան սահմանն այն չէ թէ արդեօք Ազգանոցայ խնդիրը նորէն Վարչութեան յղել պէտք է թէ ոչ. կամ թէ ապագային մէջ ի՞նչ հետեւանք կրնայ ունենալ։ Բ. Դուռը կրսէ իւր պատասխանագրոյն մէջ. «եթէ Պատրիարքը համոզուած է՝ կաթուղիկոսին անպարտ ըլլալը ն, ինք ալ բսելիք մը չունի». իսկ Սրբազանը սահմանադրական Պատրիարք ընտրուիլ մեզ գլուխ է. և իւր ընելիքը մեզմէն լսել կուզէ. բայց բան որում Սրբազանը իրրև նախագահ ազգային բոլոր ժողովոյ այս գործին մանրամասնութեանց տեղեկացած է ի մօտոյ և առաւել քան զմեզ. նախ լրեն պէտք է հարցունենք թէ «ինք խաչաւոր կաթուղիկոսի վերայ եղած քննութենէն, խոստովանութենէն և երդումէն անոր անպարտ ըլլալուն համոզուած է իսկի՞ մուր թէ ոչ»։ Թող Սրբազանը խօսի նախ. եւրբ մեր ընելիքը որոշել ջանանք, այս է մեր որոշելու կէտը։

ՕՀԱՆՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Քանի որ իրենդիրն օգտագործութեան կը պատկանի, ամբաստանեալը թէ եպիսկոպոս բլլայ և թէ՝ կաթուղիկոս, Բ. Դուռն որ ժամանակ ուզէ նէ կարկած ուրիշ ընելով կրնայ դատաստանի ենթարկել։

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Բ. Դուռն գնաշատաւոր կաթուղիկոս կարկածելի դատ է ասաելու Պետրոս կաթուղիկոսի եպիսկոպոսն ոչ յայտարարութեան վրայ թէ՝ կաթուղիկոսն բարձանուններն Լուսաւորի և Շահինի անուն երկու բիբլիաներ են։ Այսոր այդ Լուսաւորին ու Շահինը մեռած են, և Բ. Դուռն այս երկու անձինքին դատ ուրիշ ապացոյց մը չէ կրցած գտնել խաչաւոր կաթուղիկոսին վրայ եղած կարկածը հաստատելու համար, և քանի որ անոնք ալ մեռած են. Բ. Դրան ձեռքը բնաւ միջոց մը չէ Ճեպած. խաչաւոր կաթուղիկոսին կարկածեալ մանանկցութիւնը կարենալ հաստատելու համար։ Ուրիշ բան է թէ որ Լուսաւորին ու Շահինը յարութիւն առնեն և կենդանանան, քանի որ այս անկարելի է, ուրիշ փաստ մը չը կայ Կառավարութեան ձեռքը և յաւիտեան կէտ մը չպիտի գտնայ նորէն դատաստանի ենթարկելու գնաշատաւոր կաթուղիկոսն։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այսն ըսածներդ ճիշդ է, բայց դարձեալ խնդրին դուրս է Բ. Դուռը Պատրիարքին յանձներ է ընելով եթէ դու համոզուած ես, ես ընելիք չունիմ։ Ընել է որ կատարելապէս Սրբազանին շրջանէն կախուել է այս խնդրոյն վրայ. ուրեմն նախ՝ իրմէն ընելու ենք իւր ունեցած համոզումը։ Թէ որ Սրբազանը Սահմանադրական Պատրիարք չըլլար. ինքներն կը տնօրինէր և մեզի բան մը չէր հարցնէր։ Այժմ քանի որ իրրև Սահմանադրական Պատրիարք մեզի կը դիմէ և կը հարցունէ, մեր ալ պարտաւոր ենք պատասխան մը տալ. բայց դարձեալ կ'ըսեմ, այս պատասխանը Սրբազանն ինք պէտք է մեզ ներշնչէ. թող շնորհ ընէ մեզ յայտնել իր անձնական կարծիքն ու համոզումը, մեք ալ մեր բսելիքը կը պատրաստենք։

ՓԱՇԱԶԷՆԱՆ Ց. ԷՖ. — Սրբազան Պատրիարքն Սահմանադրապէս Վարչութեան գլուխն ըլլալուն համար, ինք անձնապէս կարծիք չ'կընար յայտնել և օժանդակ ժողովոյ կարծիքն առնելով պիտի պատասխանէ իրեն եղած հարցմանց. ուստի պէտք է որ փոխանակ անձնական Պատրիարք Սրբազանին հարցում ուղղելու՝ Վարչութեան ուղղուի։

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ Սրբազան Պատրիարքը Վարչական ժողովոյ մեծամասնութեան կարծիքն առնելով պիտի գործադրէ, արդէն նոյն ժողովները մեծամասնութեամբ տուած են իրենց կարծիքը, բայց որովհետև Սրբազանը շուտով գործադրել առանց Ազգ. ժողովոյ կարծիքն ալ առնելու, ուստի ժողովս Վարչութեան դրաւումն իւր ուշին տակէն բերելով՝ եթէ օրինաւոր տեսնէ և բուսական համարի, այնպէս է որ Ս. Պատրիարքին յայտնել իւր բուսական համարիքը և կ'ընենայ։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ. — Եղած խօսքերը կը պարտաւորեն զմեզ խնդրոյն խորը մտնել, առանց անոր կարելի չէ խնդրոյն մէջէն ելնել։ Կ'ըսեն թէ գործը Ս. Պատրիարքին Ճեպած է, եթէ նոր համոզում կը լնենայ։ Բայց ո՞վ կրնայ պարտաւորել զՍրբազան Պատրիարքն՝ որ իւր խղճովն ըսէ թէ համոզուած է կամ ոչ. ապ բուսական ապացոյց մ'է թէ ինք կատարեալ համոզում մը չունի, քանի ժողովներ կը համոզուին, բայց մէկ մարդ չ'համոզուիր։ Այսր ուրիշ մէկ մարդ ինքնուրոյն է, որովհետև Ազգային ժողովն ալ խղճով համոզուելոյ չ'կրնար ըսել։ և խղճի հանգամանն վրայ չ'կրնար վճիռ տալ։ Բարիտաստուր էֆ.ին ըսածին պէս Բ. Դուռը չէ թէ երբ ուղղ Պատրիարք կամ կաթուղիկոս դատաստանի կ'ենթարկէ, այլ սնարագործական սոխաստանութիւն ըլլալու է, այս մարդուն վրայ եղածը պարզ կարկած է, Դուռը կ'ըսէ թէ իրեն համար ընելիք մը չունի։ այս խօսքն արդէօք յաւիտենական խօսք է՞ թէ ոչ ժամանակի մը համար, միթէ երբ որ ուղղ խօսք չը՞պիտի բնէ։ Ուստի՝ ինչպէս վրէշ մ'առաջ ըսի, ուղարկելու է Վարչութեան որ քննէ եկած թէկգէրներն, եթէ անդամական դատէ, թող ամբողջացնէ և պակասը լրացնել տայ, այն ատեն ոչ Պատրիարքին բան կը մնայ և ոչ մեզի։

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ. — Մէրեէմ-գուլի էֆ.ին ըսածը չ'ընդունուելու բան է, վասն զի պատասխանատուութիւն կը ծանրացնէ Պատրիարքին վրայ . . .

(Միքայէլ-գօլի էֆ. — Ընդհանրապէս)

Նոր Ազգ. Ժողովը Պատրիարքին հաւանութիւնը կ'ուզէ, ժողովներուն կ'ուզէ, Պատրիարքին հաւանութիւնը գործ մը չունի, քանի որ ժողովները հաւանած են։ Իսկ ապագային համար ո՞վ կրնայ երաշխաւորել, հիմակուընէ չենք կրնար ապահովցնել։ Կ'ենթադրուի թէ խնդիրը վերջացած է, եթէ Ազգ. Ժողովը Վարչութեան բրածն օրինաւոր կը գտնէ, պէտք է յայտնէ Պատրիարքին որ գործադրէ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բոլոր խօսք ուզող Երեսփոխանք երկերկու անգամ խօսեցան, ըստ կանոնի երրորդ անգամ խօսք չեմ կրնար տալ անոնց. ուրիշ խօսք ուզող ալ չ'կայ, ժամ է ուրեմն վիճաբանութիւնը փակելու ձեռնարկել։ Բայց ներեցէք որ խնդիրն իր սահմանին մէջ ամփոփենք և ապա վճիռ արձակելու պատրաստուինք։ Աղթամարայ Կաթողիկոսը ոճրագործական մասնակցութեան կասկածանաց ենթարկուելով տարիներով քննութիւն եղեր է վրան. այսօր Բ. Դուռը Սրբազան Պատրիարքին կ'ըսէ «եթէ դուք հաւանած էք անոր անպարտ լինելուն, ես ալ ըսելիք մը չունիմ». Սրբազանը այս անգամ Վարչական Ժողովոյ չը դիմեր, այլ Ազգային Ժողովոյս որոշման կ'ենթարկէ խնդիրը. մեք այժմ պատասխան մ'ունինք տալու Սրբազանին. այս պատասխանն ուղիղ բանի հասկցնելու համար սապէս ըսել հարկ է «այո, Սրբազան, մեք հաւանած ենք Կաթողիկոսին անպարտութեան, ուստի դուք ալ հաւանեցէք և խնդիրը վերջանայ» և կամ ճիշդ ասոր հակառակը. բայց պիտի կրնանք արտասանել այսպիսի խօսք մը. ես առաջարկեցի որ նախ Սրբազանը շնորհ ընէ մեզ իր կարծիքն ու անձնական հաւանութիւնը յայտնել, վասն զի նա մեզնէ շատ առաւել գիտակցութիւն ունի խնդրոյն ամեն պարագայից. բայց կը ցաւիմ որ Սրբազանն չը ձգուիր պատասխանել անձամբ. ամեն մարդ անոր փոխանորդ կանգնելու կը թեւակոխէ իբր թէ կարօտ ըլլար փոխանորդի. մինչ կ'ուզէ խնդրոյն ներկայն ձգելով ապագային հոգ կը տանուի. եթէ հիմա Խաչատուր Սրբազանն անպարտ հռչակուի և երթայ բազմի Կաթողիկոսական Աթոռը, կ'ըսեն, օր մը կրնայ կասկածանաց ծայր մը գտնուելով, կրկին դատաստանի ենթարկուիլ, և այն ժամանակ յետին չար քան զառաջինն կ'ըլլայ. զի Կաթողիկոս մը պիտի դատափետուի և դատաստանի քաշուի, որ Ազգին և Եկեղեցւոյ մեծ նախատինք է, իբր թէ Խաչատուր Սրբազանն այժմէն Կաթողիկոս եղած չ'ըլլար. չէ՞ք յիշեր որ մենք անկէ առաջ Սրբազանին հարցուցինք թէ՝ Խաչատուր Սրբազանի Աղթամարայ Կաթողիկոսութեան ընտրուելուն և օծման մէջ կրօնական խնդիր կա՞յ թէ ոչ. Սրբազանը մեզ պատասխանեց թէ՝ Համագումար Ժողովով խնդրոյն կրօնական մասը վճռուած է. ուրեմն ինչ որ ապագային համար կը վախցուի, հիմա, այսօր կայ մեր առջև, Կաթողիկոս մ'ունինք ամբաստանութեան ներքևեայ, անոր վրայ խօսելու է. Գալով խնդրոյն քաղաքական կէտին, քանի որ ամբաստանեալն վրայ մեղապարտութեան վճիռ արձակելու փաստ ու ապացոյց չ'կայ և չէ գտնուէր ութ տասն տարուան մէջ, կարծեմ թէ իբրև դատաւոր, իբրև օրէնսգէտ, իբրև Քրիստոնեայ մեր վճիռն անոր արդարացման կողմն հակելու է. բայց դարձեալ կըսեմ, մեր խիղճերն հանդարտեցնելու համար, նախ Սրբազան Հօր անձնական կարծիքն ու հաւանութիւնը լսելու ենք։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Խնդրոյն կրօնական մասին համար Համագումար Ժողովոյ տրուած վճիռն ընդունած եմ, գալով դատաստանական մասին, ես ժողովներուն որոշմանց դէմ բան մը չունիմ ըսելիք. երբեք սիրտս չուզէր հաւատալ չէ թէ կաթողիկոսի, այլ մինչև անգամ սովոր քահանայի մը մարդասպանութեան մասնակցութեան համար եղած կասկածներուն։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ալ հիմա խնդիրը վճռական հասած է, տեսէ՛ք, Վանայ կուսակալութեան դատաւորական ատեանը չէ կարողացեր դատական խուզարկութիւններն ու քննութիւնը շարունակել և վճիռ մը տալ, դատը և ամբաստանեալն ասոր փոխադրուեր են, մեր Քաղ. Ժողովն Բ. Դրան առաջին դրոյն վրայ Խաչատուր կաթողիկոսն անպարտ և ազատ ի կասկածանաց վճռեր է. Համագումար կրօնականաց ժողովը եկեղեցականութեան հարցաքննիչ և երդմնցուցեր է և անոր արդարութեան համոզուեր է. Նախագահ Սրբազանն ալ կ'ըսէ թէ ժողովներուն որոշմանց դէմ բան մը չունի ըսելիք. Բ. Դուռն ալ՝ եթէ Պատրիարքն ալ հաւանած է, ես ալ ըսելիք չունիմ կ'ըսէ, հիմա կը հարցունեմ Ժողովին թէ այն յայտարարութեան վրայ կրնա՞ք բանի մը դնել Խաչատուր կաթողիկոսի մեղսակցութեան կասկածանքէն ազատ ու անպարտ ըլլալու կամ մեղապարտ չըլլալու խնդիրը։

ԲԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ. — Ոչ. ոչ, այսպիսի բան չենք ընդունիր։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. Ուրեմն փոխենք քուէի բառերը և Ս. Նախագահին հարցունենք թէ ինչ պատասխան կուզէ մեզնէ։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես կուզեմ որ Ժողովն ինծ պատասխանէ թէ «Բ. Դրան վերջին պատասխանագիրը բաւակա՞ն է Խաչատուր կաթողիկոսն ազատ հրատարակելու իր վրայ եղած մեղսակցութեան կասկածանքէն և Աղթամարայ խնդիրը վերջացնելու»։

Ատենապետ Փաշան խնդիրը քուէի դրաւ այն բառերով և Ժողովն անհնատանուր մեծամասնութեամբ և ձեռամբարձ հաւանութեամբ այո պատասխանեց Սրբազանին հարցման։

Տ. Յովհաննէս բէյ Միքեան և Փափազեան էֆէնտի յայտարարեցին թէ իրենք ձեռնպահ են։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Աղթամարայ խնդիրը վճռապէս լուծուած է, կը յանձնենք Ս. Նախագահին Վարչական ժողովոյ տնօրէնութեամբ զայն ըստ օրինի գործադրել։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Պարտ կը համարիմ Ազգ. Ժողովին իմ խորին շնորհակալութիւնս յայտնել, զի Աղթամարայ խնդիրը լուծելով ազգն ու ժողովները մեծ տագնապէ մը ազատեցիք։

Դ.

Տեղեկագիր Պատրիարքական հարցմանց յանձնախմբին

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գիտէ Ժողովն որ անկէ առաջ Սրբազան Պատրիարք Հայրն եկեղեցականաց վարժարանաց և այլոց մասին հարցում մը բրած և Պատրիարքական հարցմանց քննիչ յանձնախմբէն անոր վրայօք տեղեկագիր մը եկած էր, որ արձանագրուած է նախընթաց բացման վերջին նստին ատենագրութեան մէջ, և Ժողովը զայն վերաքննութեան ենթարկելու համար Օրակարգն անցնելու որոշած է. Ուրեմն նոյն տեղեկագիրը վիճաբանութեան կդնեմ, Ա. մասէն սկսելով, որ է՝

«Այն եկեղեցականաց մասին, որոնք առանց բանաւոր պատճառի իրենց կոչուած տեղը չեն կամիր երթալ ըստ Նուիրապետական կարգաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Յանձնաժողովս կառաջարկէ որ այն խնդիրն ըստ որում կրօնական՝ յղել առ Կրօն. Ժողովն, որ եթէ ինքնին չկրնայ կարգադրել Սահմանադրութեան 29 րդ յօդուածին համաձայն պէտք է դիմէ Եկեղեցական համագումար ժողովին և ըստ նորա տնօրէնութեան անհնազանդներուն վրայ հարկ եղած պատիժն ի գործ դնէ»։

Ասոր կընթերցուի ձեր յանձնախմբին տուած պատասխանն, որ կառաջարկէ խնդիրը յղել Կրօն. Ժողովին և ասոր միջոցաւ Եկեղեցական համագումար ժողովին ի պարտուպատշաճ տնօրէնութիւն։ Եթէ այս առաջարկութեան վրայ դիտողութիւն ընելու համար խօսք ուզող չկայ, քուէի պիտի դնեմ։

ՄԻՔԱՅԷԼ-ԳՕԼԻ Տ. ԷՖ. — Յանձնախումբն այս խնդիրը զուտ կրօնական նկատելով կառաջարկէ յղել Կրօն. Ժողովին. իսկ ես պարզապէս ազգային նկատեմ այս խնդիրը, և հետևաբար կառաջարկեմ յղել առ Վարչութիւնն։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Յանձնախմբի տեղեկագրոյն թէ այս առաջին կէտը և թէ յետագայ կէտերն ես առաջարկեցի. իմ նպատակս կուզեմ բացատրել, որ այս է,

11

Ժամանակէ մը ի վեր եկեղեցականք շարաչար կրամբասին. տիեզերքին մէջ նախատական բառ չմնար, հնաւանդեն և եկեղեցականաց գլուխը կթափեն։ Մէկ կողմէ այս, միւս կողմէ եկեղեցականք ալ վհատելով գործէ կմախչին. ասիկա ինձ մեծ ցաւ պատճառած է. կան եկեղեցականներ՝ որ գործելու հակամէտ են, բայց դասիք նախատինքին տակողով կմարանին. կան ալ՝ որ բնաւ հոգերնին չէ և իրենց հանգստութիւնը միայն կնային, մոռնալով իրենց նախնական պարտաւորութիւնը. չեն մոռնար թէ իրենց ընթացքը հոգևորականութեան ոգւոյն հակառակ է. վասն զի նա՝ որ սեղանոյ պաշտօնեայ է, ի սեղանոյ անուն կերկիցէ՝ կըսէ թեղէա Պօղոս Արքայան Աւաքեան, բայց ուրիշ տեղ մ'ալ կըսէ, ես ձեր վրայ չծանրացայ, այլ ձեռքս այս պաշտեցին իմ պէտքերս։ Աստ հակառակ կտեսնեմ որ կերպով մը կարծես թէ շահասիրութիւնը շատցած է եկեղեցականաց մէջ. միւս կողմէ այն տարիման սուտուփուտ խօսքերու և նախատանաց կուտակութիւն կայ իրենց վրայ՝ որ եթէ երբեմն բոլոր զօրութիւնին կը շուռելով բան մը ընելու կարող ալ լինին, երկու ժամ չանցած՝ անհամաձայնութիւն մը կելնէ մէջերնին. իրաւ է որ իրենք արժանի չեն այսչափ նախատուելու, այսու հանդերձ պէտք է որ իրենք ալ պարտաւորութիւններին աչքի առջև ունենան և չհամարձակուին Մոլորական օրինաց տակ ընդ տիան և առաքն ընդ առաքան դրութեանը։ Այս ընթացքը և դաղափարը թէ՛ եկեղեցականաց և թէ՛ աշխարհականաց մէջ ալ կայ, ներդաշնակութիւն և փոխադարձ համբերութիւն պակսած են իրենց մէջ. կայսիմ այն եկեղեցականաց համար՝ որոնք իրենց համար որոշուած պաշտօններն ոչինչ պատճառներով չեն ընդունիր և չեն կատարեր։ Մեծ ցաւ կը յայտնեմ նաև այն աշխարհականաց համար՝ որոնք կնախատեն եկեղեցականներն և քարէ քար կդարնեն։

Այսիկ դատ ուրիշ ըսելիք մ'ալ ունիմ, այն ալ վարժապետաց համար։ Ես ինքս վարժապետի թոռ եմ, երկու եղբայր ալ ունիմ՝ որոնք վարժապետութիւն կընեն. ես ալ եպիսկոպոս ըլլալով հանդերձ վարժապետութիւն կընեմ, ինձի համար վարժապետական պաշտօնէն տարբեր սիրելի բան չկայ. ես կխոստովանիմ որ վարժապետներն այնչափ սիրելի ըլլան, մինչև իսկ վարժապետ մը տեսնեն նէ՝ յատաջադիմութիւնը կուգայ կոր ըսեն։ Բայց ցաւօր սրտի կը տեսնեմ որ վարժապետներն իրենց պաշտօնին և պարտաւորութեան տակնմանէն դուրս երթալով՝ ուրիշ գործերու կմիջամտեն, ժողովրդեան խաղաղութիւնը կվրդովին և դպրոցաց յետադիմութեանը պատճառ կըլլան։ Ինչպէս յայտնի է պատանեաց և Պոլսոյ թաղերու անցքերէն։

Ժողովուրդը ե՞րբ վարժապետին համակարծիք չէ՝ անոր գո՞ծը այսինքն դպրոցը ուրեքու կերթայ, ըսողին խօսքին չեն նայիր՝ հապա անձին դէմ կենաքսին, մեծ աշխատութեամբ յատաջ եկած առաջին կարգի դպրոց մը այս պատճառներով տապնապներու հատաւ։

Ինչպէս որ կխոստովանի՝ որ եկեղեցականներըն իրրև Աւետարանի քարոզիչ և պաշտօնեայ բնաւ դուրս չերթան եկեղեցիէն, որովհետև իրենց քաշած նեղութիւնն եկեղեցիէն դուրս քաղաքային գործոց խառնուելու երեսէն է։ Անանկ ալ վարժապետները դպրոցի սեմէն դուրս չելլեն և չմիջամտեն ուրիշ ազգային գործերու։ Մեր ազգը առանձին թոգաւորութիւն չունի. Աստուած այնպէս անօրինելի է որ մեր քաղաքական գործերն ալ կրոնականաց յանձնենք. միթէ այս ազէ՞կ բան մ'է. ոչ. կարծեմ ամենդ ալ կվիայէք որ այս միջամտութիւնը մեր եկեղեցականաց շնորհն ու արժանիքը ոչընչացուցած է. ինչո՞ւ համար հին վարդապետները պատկառելի և մեծ համբաւոց տէր էին, անոր համար որ՝ իրենց հոգևոր պաշտօնէն դուրս գործոց չէին միջամտեր և քարոզնին կմատչէին։

Այսասիկ այս նկատումներով և այսպիսի նպատակաւ ըրած եմ իմ առաջարկութիւնս։

Այն միջոցին Աւետնաբեռ Փաշա բեմն ելաւ, թողուլ իւր ախոռը Բ. Աւետնաբեռ Ռուսինեան Էֆէնտիին։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Արքայան Հայրն

ար տանենախօսութիւնն եկեղեցականաց համար ակաւ, և վերջաբանութեանը մէջ վարժապետներն ալ խառնեց։ Նարին Արքաղեութեան հարցումն եկեղեցականաց մասին տաւ է. «Ինչ պէտք է ընել այն եկեղեցականաց՝ որ իրենց կոչման համեմատ և ըստ նախնական կարգաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ իրենց կոչուած տեղը կամ ընտրուած պաշտօնին չեն կամիր երթալ, և կուրեն դեղերիլ ատա և անդ կամ իրենց հաճոյ երեւցած տեղերը մնալ ուտելոց բանուոր պատճառի»։

Մեր յանձնախումբը այն հարցման կրատասխանէ թէ խնդիրը կրօնական է և պէտք է Կրօն. ժողովին յղուի, զի եկեղեցական օրինօք պատժէ անհնազանդները։ Իսկ Մէրեէմ-գուլի էֆէնտին շատ խնամութեամբ զիտարութիւն բերաւ թէ խնդիրը զուտ կրօնական չէ, և թէ Խատն ժողովին պէտք է յղուի իրր վարչական խնդիր։ Թէ և ճշմարիտ է Մէրեէմ-գուլի էֆէնտիին ըսածը. բայց ոչ Կրօն. ժողովն և ոչ Խատն ժողովը չեն կրնար լուծել այս խնդիրը. վասն զի հիմը սխալ է. մեր կղերական դասակարգութեան մէջ, Կաթողիկոսէն ու քահանայներէն զատ միւս եկեղեցական պաշտօնեից ո՞րը ուր տեղ պիտի գտնուին և ի՞նչ պաշտօն պիտի վարեն, կանոնով որոշուած չէ։ Մեր Կաթողիկոսն իր տեղն է, Քահանայք ալ բայց 'ի տուսուպեալ պանդուխտներէն իրենց որոշուած եկեղեցիները կը գտնուին. իսկ Վարդապետ, Եպիսկոպոս, Արբեպիսկոպոս մասնաւոր տեղ չունին օրինաւ սահմանուած. ուստի ամեն տեղ կը գտնուին բայց 'ի թերեւս այն տեղերէն ուր պէտք է գտնուին։ Մեր եկեղեցւոյ քահանայից մէջ ո՞րքան դժուարութիւն կը կրուի տեղական փոփոխութիւն մտցունել. բայց կուսակրօն պաշտօնէից համար այնպէս չէ. ասոնց ամեն մէկուն ինչ պաշտօնով, ո՞ւր տեղ և ի՞նչ թուով գրանուելիքը սահմանուած չ'ըլլալուն, ոչ ժողովուրդը ուզեցոյց մ'ունի իր Հովիւն կամ առաջնորդը կամ ժողովականը ընտրելու ժամանակ, և ոչ ընտրեալն կամ պաշտօնի կոչեցեալն կանոն մ'ունի հետեւելու և ժողովրդին ընտրութեան կամ Վարչութեան որոշման պատասխանելու։ Ամէն կը ծագին անհնազանդութեան խնդիրները։ Օրինակի համար՝ գաւառ մը իր առաջնորդն ընտրելու ժամանակ փոխանակ իր կարողութեան ու վիճակին գիտակցութեամբ գործելու, իր փոխարին կամ փոստատարութեան ատանք կը դնէ, և նորընծայ վարդապետ մ'անդամ պահելու անկարող վիճակի մէջ՝ Խորեն Եպիսկոպոսը կը խնդրէ իրեն առաջնորդ. կը պատահի նաև որ միևնոյն անձն միևնոյն ժամանակ մէկ քանի տեղ առաջնորդութեան կը կոչուի. հարկաւ կը տարտանի ընտրելը և թերեւս և ոչ մէկ տեղ երթալ չ'ուզեր. անհնազանդ է պիտի ըսէք. և ի՞նչ իրաւամբ։ Մեր 'ի նախնեաց գիտակ ենք որ մեր վարդապետներն ու եպիսկոպոսներն կամ քարոզչութեան կ'ուղարկուին հեթանոսներն ուսուցանելու համար, կամ հովիւ կը կարգին ժողովրդոց և կամ վանքերու մէջ Եկեղեցւոյ և ազգին կը ծառայեն զրաւոր երկասիրութեամբ և կամ անապատները կը բնակին ճգնութեամբ անցուցանելու իրենց կեանքը։ Հիմա մեր քաղաքական վիճակի պարագայից պահանջմամբը մեր Եպիսկոպոսներն ու Վարդապետները ժողովականութեան, քարոզչութեան և առաջնորդութեան ալ կը կոչուին։ Բայց ունի՞նք կանոն մը, օրէնք մը՝ որով գիտնանք թէ ո՞ր ատենանի պաշտօնեայք՝ ո՞ր տեղուանք առաջնորդ պիտի կարգուին։ Մեր նախնեաց ժամանակ Կաթողիկոսական Աթոռի քով 12 և առաւել Եպիսկոպոսաւանք կը գտնուէին. հիմա, մեր երկրին վրայ խօսելով, գիտե՞նք քանի եպիսկոպոս կամ վարդապետ պէտք է գտնուին մեր Կ. Պոլսոյ Պատրիարքական աթոռին շուրջը. ո՛չ երբէք. տեղ մը այսօր արքեպիսկոպոս առաջնորդ կը դրուի, վաղը սակ վարդապետ մը, երբեմն նաև տեղւոյն աւագ քահանայն կը բազմի յաթոռ առաջնորդութեան։ Տեղ մը վարդապետ առաջնորդ կը դրուի, և վիճակին մէջ երկու եպիսկոպոս կը գտնուի կամ անպաշտօն ասատանդական և կամ վանքերու մէջ նոյն առաջնորդին իշխանութեան ենթարկեալ։ Այսպիսի պարագայից մէջ ո՞ր վարդապետը անհնազանդ պիտի կոչուի, ո՞րը արժանի պիտի ըլլայ պատժոյ ենթարկուելու, իր կոչուած պաշտօնին չ'գայո՞ղը, եթէ ի-

բեն անցարմար պաշտօնի դացողը կամ անպաշտօն ասա և անդ դեղերողը։ Ուստի՝ ըստ իրաւանց գործ տեսնելու համար կ'առաջարկեմ որ նախ Վարչութեան միջոցաւ օրէնք մը գծուի, և Ազգային ժողովով հաստատուի, և ըստ այնմ Եկեղեցականաց պաշտօնակատարութիւնը սահմանուելով, անհնազանդ գտնուողները դատաստանի և պատժոյ ենթարկուին. օրէնքն իր տրամադրութեանց մէջ պատժական յօդուածներ ալ կ'ունենայ, որոնք մեր Եկեղեցւոյ կանոնաց համաձայն կը տնօրինուին և արդարութիւնն իր տեղը կը դանէ։ Մինչև այն ժամանակ իմ խորհս չ'ներէր և ոչ մէկ եկեղեցականի վրայ անհնազանդութեան յանցանք դնել և դատական ատեանի մատնել. այն ատեանը կազէ սոսկ եկեղեցականներէն կազմուի, ինչպէս կառաջարկէ Ցանձնախումբը, և կամ խառն ըլլայ եկեղեցական և աշխարհական Վարչութեան անդամներէ, ինչպէս կուզէ Մէրեէմ-գուլի էֆէնտի։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ս. Պատրիարք Հօր բերած առաջարկութեան մէջ նայելով քննիչ յանձնախումբը զուտ կրօնական նկատած է և ըստ այնմ եզրակացուցած է յղել առ Կրօն. Ժողովն։ Բայց այդ առաջարկութեան մէջ զուտ կրօնական չեզող մաս ալ կայ, իրաքանչիւրն իրեն վերաբերեալ տեղը պէտք է երթայ։ Առաջնորդական պաշտօն առանց բանաւոր պատճառի չընդունող եկեղեցականի մը փիլան կամ վեղար չունիս երբ ըսէ Պատրիարքը, ո՞ր Ժողովին որոշմանը պիտի ըսէ, յայտնի է թէ Կրօն, Ժողովին որոշմամբ։

Առանց մանրամասն քննութեան առնելու այն բանաւոր պատճառները, որոց համար եկեղեցականք առաջնորդական պաշտօն ընդունելու կը խիթան, բաւական է որ միայն դիտնանք զանոնք։ որք ցարդ պատահած առաջնորդական խնդիրներէն ալ կերևին. ինչպէս եղած են առաջնորդներ, որ առանց օրինաւոր պատճառի և միջոցներու ինկած կամ հրաժարած են իրենց պաշտօնէն, կամ մանաւանդ տեղական կառավարութեան և պաշտօնէից ձեռօք հրաժարեցուցեալ են և վտարեալ ի Պոլիս, և ասա քարոյտասակներու վրայ յածած և Պատրիարքարանն ալ քիչ անգամ կարացեր է այսպիսիները պաշտպանել և անոնց իրաւունքը յարգել տալ։ Դարձեալ պիտի տեսնենք առաջնորդներ որ անօթութենէ ազատելու համար իրենց պաշտօնէն ինքնին արձակուած են, զի զատուայ գրեթէ ամենուն մէջ տուրքին հաստատուած չեն զատական մնացուկներ, որ կարող ըլլան առաջնորդին պէտք եղած ամսականը հայթայթել, և սանկով զանոնք տալուստի հոգէ ու սրտմաշուք ազատ պահել. հոգ մը, որով կը պատահին թոյլ և մեզկ անձինք՝ փախանակ իրենց հովուական պաշտօնով զբաղելու. մինչև ժողովուրդը կը կեղեքեն. իսկ իրենց պաշտօնին ու պարտուց բնութիւնը ճանչցողներն ալ ճարահատեալ կը փախչին և հրաժարական կուտան։ Անոնց զարմանք նախ պէտք է հոգալ և ապա մեզք դնել առաջնորդական պաշտօն չունեցող եկեղեցականաց, ու մտածել թէ ի՞նչ պէտք է ընել անոնց։

Բայց եռ այս խնդրոյն առթիւ ուրիշ դիտողութիւններ ունիմ, զորս կուզեմ յառաջ բերել, մանաւանդ Վ. սեմ. Ստեփան Փոչայի այն խօսքէն առիթ առնելով, որ ըստ թէ, եկեղեցականք ուր որ պէտք են հոն չին գտնուիր, և ուր որ պէտք չեն հոն կը գտնուին։ Ի հարկէ այս խօսքը քահանայից չը վերաբերիր, զի նոքա եկեղեցւոյ մը վրայ կը ձեռնադրուին և անկէ ետև մինչև մահը հոն կը մնան, խիստ քիչ անգամ կը պատահի որ քահանայ մը ձեռնադրուած տեղէն ելնէ և ուրիշ տեղ երթայ։ Իսկ վարդապետները սահմն տեղի համար են, և սահմն տեղ երթալու կարող։ Այդ վարդապետ կամ եպիսկոպոս եթէ ուր որ պէտք են հոն չեն գտնուիր, և ուր որ պէտք չեն հոն կը գտնուին, որն որ կը չշարիկ նաև Ս. Պատրիարք Հօր տառաջարկութիւնը, քննել և հասկընալ պէտք է թէ ո՞րն է այն տեղը, ո՞ւր կը գտնուին վարդապետք և եպիսկոպոսունք, մինչդեռ հոն գտնուիլ պէտք չէին։ Այս տեղը տարակոյս չկայ որ Պոլիս է։ Մինթէ Պոլիս վարդապետի պէտք չունի՞. Պոլսոյ մէջ 30 էն աւելի եկեղեցի անիներ, և 20-24 մեծ եկեղեցիներ կան, որոց իրաքանչիւրն քաջալերող

բեմատացներու կը կարօտի. արդ զէթ 24 վարդապետ կամ եպիսկոպոս պէտք են ի Պոլիս, որ նոյն եկեղեցեաց քարոզչութեան պաշտօնը վարեն. պաշտօն մը որ սահմանապրապէս ալ ճանչցուած և ընդունուած է, մանաւանդ որ եկեղեցական Հանրագումար ժողովոյ անդամաց կարգն են նաև քարոզիչ վարդապետք։ Այսկէ զատ Պոլսոյ մէջ է Թուրքիոյ պէտք։ Այսկէ զատ Պոլսոյ մէջ է Թուրքիոյ Հայոց Երեսփոխ. Ժողովը, որոյ մէկ եօթներրորդ մասը կը կազմեն եկեղեցական անդամք, և ի հարկէ ասանք եկեղեցական դատաւոր հաստատելի ասանք եկեղեցական դատաւոր հաստատելի ասանք եկեղեցական դատաւոր հաստատելի

Հիրաւն առաջնորդներու պէտք ունին։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է.Ֆ. — Իրաւունք ունիք. մենք չենք ըսեր թէ գաւառները բանիրաւն առաջնորդներու պէտք չունին. այլ թէ Պոլիս ալ բանիրաւն վարդապետներու և եպիսկոպոսներու պէտք ունի, և եղածները քիչ են, սուղի չեն։ Բանիրաւն եկեղեցականներու եթէ պէտք ունինք. ինչո՞ւ չենք հայցներ. ի՞նչ կրնեն գաւառաց վանքերը։ Բայց այս խնդիրը նոր չէ. նախորդ Սրբազան Պատրիարքին օրով ալ Մարշութեան մէջ եղած է. խնդիր եղած էր 'ի Պոլիս չթողուլ վարդապետներն և եպիսկոպոսները, մանաւանդ անոնց բանիրաւները։

(Ընդմիջումներ և աղմուկ)

Ես ձայնս լսելի ընելու կարող եմ, կրցածիս չափ պիտի աղաղակեմ. այս խնդիրը Պոլիս Պատրիարքի անկման թուականէն սկսած է. վասն զի թէ Պոլիս Պատրիարքի դէմ ու թէ անկէ եւս եպիսկոպոսաց մութիւնը և զորութիւնը տեսնուեցաւ...

(Ետնագոյն աղմուկներ)

ԱՏԵՆԱԳՈՏ Է.Ֆ. — Հանգարտեցէք, թէ ոչ կը պարտաւորիմ առեանը վերցնել։

Այն միջոցին Ռուսինեան էֆէնտի ազմուկը չկրնալով խաղաղցընել և ատենախօսը խնդրոյն սահմանը մոցուանել «Առեանը գոցուած է» ըսելով ոտքովն իջաւ. բայց երեսփոխաններէն ոչ ոք իր աթոռը չթողուց, և պահ մը եղբը Դ. ատենապետ Եուսուֆեան էֆէնտին եկաւ բազմեցաւ և շարունակեց ատենական պաշտօնը։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է.Ֆ. — Ես բառական կը սեպեմ ինչ որ խօսեցայ. ուրիշ ըսելիքներս ալ ուրիշ առիթի կը թողում։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ենարհ ըրէք, երեսփոխան տեարը, մէկ խօսք մը պիտի ընեմ։ Դուք՝ Փափազեան էֆէնտի, կըսէք թէ ըստ ուրում Պոլսոյ Պատրիարքի դէմ եպիսկոպոսաց մութիւնը տեսնուեցաւ, ասոր համար չէք ուզեր որ եպիսկոպոսները Ցեռան Պոլսոյ մէջ։ Ի պատասխան այդ խօսքիդ՝ սա կրսեմ որ եպիսկոպոսունք հոգեւոր Պոլսոյ Պատրիարքին պէտք անձի մը դէմ երան ըսելը, նոյն եպիսկոպոսներն անարդել է։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է.Ֆ. — Եպիսկոպոսներն իրենց պարարը կատարեցին։

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Կրնամ որ Սրբազանին ատաջարկութիւնն ու իմ խօսքերս սքանչայ հակադրուած են, և ասոր համար Փափազեան էֆէնտի յուզուելով սխալ խօսքեր արտասանեց։ Այս ըսի որ մեր ազգերնիս օրէնք մը չունենալուս համար նախ օրէնքին պակասութիւնը լեցուի, կանոնաւոր պաշտաւնեայ թիւը, պաշտօնը ելլայ. ճշգիւ որչափ հրատարակուի, և այն ատեն անհնազանդ եղողն իրաւամբ պատուի։ Սրբազանին ատաջարկութեան ոգին ալ այս է կարծեմ. կան պատճառներ՝ որ իրաւունք կուտան եկեղեցականաց. կան ալ՝ որ օրէնք չըլլալուն համար չենք կրնար դատապարտել։ Ըսաղ չկայ որ Պոլսոյ մէջ եպիսկոպոս չգտնուի. ընդհակառակըն պէտք է գտնուին. բայց կը տեսնէք երբեմն որ շատերը ատոր կը գտնուին և դրսերը տարիներով ատաջնորդի երես չեն տեսներ։ Ուստի կը կրկնեմ որ ամեն բանէ առաջ օրէնք մը պէտք է հաստատել, և ասոր համար կատաջարկեմ Վարչութեան յանձնել որ օրէնքին ծրագիրը պատրաստէ։

[Ընդհանուր հաւանութեան ցոյցեր]

ԱՏԵՆԱԳՈՏ Է.Ֆ. — Բուն որում Ժողովը համամտութիւն կը ցուցնէ Սահմանի փաշայի ատաջարկութեան, ուստի դիւանը պատրաստ է նոյն ատաջարկութիւնը քուէի դնել, եթէ ուրիշ ատաջարկութիւն ընող չի կայ. բայց նախ՝ Պատրիարքական հարցմանց յանձնաժողովին տեղեկագիր Մատթէոս սրբազանն ալ մտիկ ընենք որ խօսք ուզած է։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Զեր յանձնաժողովն ըստ նուիրապետական կարգաց Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ ընտրով ինչպէս դրած է Ս. Պատրիարք Հայրը իր Հարցապրին մէջ այնպէս ըմբռնած է որ Պատրիարքը կամ միմակաւոր Եպիսկոպոս մը երբ օրինական հրաման մը կընէ իր ատորակարգեալ եկեղեցականին, սա պէտք է գործադրէ այդ օրինաւոր հրամանը եթէ բանաւոր արդելք մը չունի. և երբ չգործադրէ, այն ատեն պակասաւոր կրլլայ. այն տեսակէտով յանձնախումբը զատ կրսնուի Նիստած է խնդիրը և ոչ քաղաքական, և ասոր համար կատաջարկի խնդիրը յղել Կրօն. Ժողովին և անկէ եկեղեցական Հանգուցեալ Ժողովին ի տնօրէնութիւն։ Եկեղեցական Համ. Ժողովին պէտք է երթայ այս խնդիրն, վասն զի եկեղեցւոյ այս պաշտաւնէից մէջ եպիսկոպոսներ ալ կը գտնուին. և եպիսկոպոս մը դատելու համար բաւական չէ մէկ եպիսկոպոսն, այլ ատ նուազն զոնէ երեք պէտք է ըլլայ ըստ կանոնաց եկեղեցւոյ, որպէս զի կարող ըլլան դատել եպիսկոպոս մը և անոր համար պէտք եղածը ի գործ դրուի։

Եկեղեցականաց գաւառները պաշտօն շընդունելու պատճառները շատ են, ես ալ եկեղեցւոյ մի վարդապետ՝ ունիմ պատճառներ՝ որոց բացատրութիւնը ի հարկին տալու պատրաստ եմ երբ պատիւ ունենամ այս խնդրին քննող Ժողովին հրաւիրուելու։ Իսկ որովհետև այս խնդրոյն կից դրամական խնդիր ալ կայ, ինչպէս ուրիշ հարցմամբ մը ըսած է Ս. Պատրիարք Հայրը, այս խնդիրն ալ պէտք է ներկայացնայ Խառն Ժողովին։ Տեարք, դրամի խնդիրն թէեթէ խնդիր չէ, ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ. վասն զի սուակ պէտք է. առանց սուակի կարող չէ ապրիլ ատաջնորդը։ Եթէ Պոլսոյ մէջ Պատրիարքի համար սուակ պէտք է, նոյնը գաւառներուն մէջ ատաջնորդին ալ պէտք է։

Տ. ՆԵՐՍԷՍ Վ.ԱՐԴ. — Այս խնդիրը թէև առաջին անգամ է որ կուգայ կը ներկայանայ հս Ս.ԳԴ. Ժողովին, սակայն Խառն Ժողովոյ մէջ արդէն յուզուած է այն միջոցին՝ երբ ես ալ Կրօն. Ժողովոյ մէջ պաշտօն կը վարէի. հոն այնպիսի դիտողութիւններ եղան՝ որոց Ս. Պատրիարք Հայրն ալ իրաւունք տուաւ։ Վասն զի ինք փոքրաւոր ըլլալով գիտեր թէ այս խնդրոյն մէջ ինչպիսի դժուարութիւններ կան, և ըստ այն ժամանակ թէ գայլ կարծիք ունիք որ Պատրիարքը Պոլսոյ մէջ գտնուած բանի մը բանիրաւն վարդապետները դուրս հանել կուզէ, մինչդեռ ես կը զեմ ըստ, որ այնպիսիներն իմ՝ շարքս սրահեմ։ Եթէ այս մասին կայ յանցանք մը, ներեցէք ինձ ըսել թէ մեծաւ մասամբ աշխարհականացած է այս յանցանքը քան թէ եկեղեցականաց. խորը չեմ ուզեր թափանցել. ինչպէս որ Ս. Պատրիարք Հայրն այս ատեանին մէջ ըսած է երբեմն, ես ալ կը կրկնեմ. Պոլսոյ մէջ վարդապետներ կան՝ որ եկած են գործով, և գործերնին չը լմնցուցած համար կը զեգերին. լմնցուցէք գործերնին՝ որ երթան։ Պոլսոյ մէջ ալ թէ՛ վարդապետներ և թէ՛ եպիսկոպոսներ պէտք են, և բնականապէս անոնց մէջէն քիչ մը ընտիրները պէտք են. բայց չունինք այսօր այնչափ՝ որչափ որ պէտք են, Ս. Աւետարանի լատին Հանձարդարում են և մշակք տակաւ։ Որքան ճիգ թափեր և ընտիր մշակներ հայցնենք։ Մեր ատաջին պէտքն է այս։ Զանոր այն կէտին՝ որ կրսեն թէ վարդապետներն Ատաջնորդութեան կը կոչուին և չեն երթար. բայց զայսպիսիները դիտեն և վարձով թէ ինչ մեծ դժուարութիւններ անկարող կընեն զիրենք այդ պաշտօնին մէջ շարունակելու։ Ես ըսած եմ արդէն, հոս այ կրսեմ. ես անհնազանդ չեմ և պատրաստ եմ պաշտօնի երթալ եթէ դիս դրկեն, թէպէտ և ատաջնորդութիւն ըրած չեմ, բայց 8 տարի ատաջնորդի բով կեցած ըլլալուս համար փորձառու եմ և դիտեմ թէ ինչ մեծ դժուարութիւններ կան դրսերն ատաջնորդի մը համար. օրինաւոր քննութիւն չկայ երբէք, ատաջնորդը կատարարութեան հետ դժուարանալու տիրներ պակաս չեն. և ինչ հարկ թուաւին մնասնց ընել. Վերջապէս՝ եթէ հաշտ աչօք նայուի այս խնդրոյն վրայ, այնչափ յանցանք չպիտի դրնուի եկեղեցականաց վրայ՝ որչափ աշխարհականաց վրայ. եթէ իրաւունք և եթէ պարտիք՝ երկու կողմն համար ալ կան. ոչ ժողովուրդն եկեղեցականէն և ոչ եկեղեցականը ժողովրդէն

երբէք չեն կրնար բաժնուիլ։ Ուստի ինչպէս որ ըսի, նոյնը դարձեալ կրկնելով՝ կեդրոնացնեմ թէ մեր ամենազգաւոր պիտոյքն է առաջնորդացու եկեղեցականներ հասցընել։ Ազգային Վարչութեան պարտքն է սոյն նպատակին հասնելու համար ամեն ճիգ թափել։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խօսողաց կարգն ըստ պատեցաւ, տարակոյս չկայ թէ բոլոր ատենաբանից խօսքերն իրենց օգտակարութիւնն ունին, և ամենուն դիտողութիւնները միևնոյն նպատակի մը յանդին՝ որ է կանոնական ծրագրի մը պէտք ունենալիս ըստ Սուրբ Սուրբոյն մաշոցի, և այս ծրագիրը Խառն Ժողովոյ գործն է պատրաստել, որպէս տեղեկութիւն Սրբազան ալ Համաձայնեցաւ Խառն Ժողովին յղելու։ Որովհետև Սուրբ Սուրբոյն փաշային առաջարկութիւնը քուէի կդնեմ։

Զոյս ընելով Ատենապետ Էֆէնտին կարդաց հետևեալ առաջարկութիւնը՝ զոր Սուրբ Սուրբոյն փաշան ի գիր առած էր.

« Խնդրել Վարչութենէն որ Վարդապետաց և եպիսկոպոսաց և արքեպիսկոպոսաց ո՛ր տեղուանք ինչ պաշտօնով և ինչ թուով պէտք է գտնուին՝ որոշէ և պատմառարանեալ կանոնական ծրագիր մը պատրաստէ և Ազգային Ժողովոյ վաւերացմանն առաջարկէ »։

ՐԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ.— Այդ խնդիրը զուտ կրօնական է, պէտք է որ Կրօն. Ժողովին և անկէ ալ Համագումար Ժողովին երթայ։

(Ազմուկ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Երբ խնդիր մը Վարչութեան Խառն Ժողովին կը յղուի, ի հարկէ Վարչութիւնն իրրև սահմանադրական ժողով պիտի նկատէ նախ թէ այդ խնդիրը բոլորովին Խառն Ժողովի՞ կվերաբերի. և երբ զուտ կրօնական մաս տեսնէ, պիտի յանձնուի Կրօն. Ժողովին, անկէ ալ Համագումար Ժողովին, երբ հարկը պահանջէ։

ՐԱԶՄԱԹԻՒ ՁԱՅՆԵՐ. — Այդ բացատրութիւնը գոհացուցիչ է։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ուրեմն Սրբազանին առաջարկութիւնը մէկ կողմ կմնայ, կարծէիք որ Դիւանն ի պաշտօնէ այդ յայտարարութիւնն ընէր. որն որ զուտ Կրօնական է։

Ատենապետ էֆ. քուէի դրաւ Սուրբոյն փաշայի վերոգրեալ առաջարկութիւնն, որ մերժեցաւ թեամբ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ Ժողովէն։

(Սուրբոյն փաշան անցաւ իւր ատենապետութեան աթոռը)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այժմ կարգը՝ յանձնախմբի տեղեկագրին Բ. մասին է, որ ահաւասիկ.

« Այն գաւառաց, որք իրենց հոգևոր հովիւներուն մարմնաւոր պիտոյից մասին, և առ կեդրոնական վարչութիւն ունեցած բարոյական և նիւթական պարտեաց մասին անտիպոյթ կը գտնուին. յանձնաժողովս կառաջարկէ յղել այն խնդիրն առ Վարչութիւն, որ աշխարհական և առաջնորդութեան պաշտօն վարող կամ ուրիշ եկեղեցական փոքրաւոր անձանց խառն յանձնախմբի մը միջոցաւ այս խնդրոց լուծման դարմանն անյապաղ գտնել ջանայ »։

Այսր վրայ խօսք ուզող կ՞այ։

ՄԷՐԵԷՄ - ԳՈՒԼԻ Ց. ԷՖ.— Յանձնախմբին առաջարկութիւնն՝ որ է Վարչութեան յղել, կընդունիմ. բայց յարակից պայմանն որ է՝ Վարչութիւնը խառն յանձնախմբի մը միջոցաւ պէտք եղած դարմանը գտնէ, աւելորդ է ըստ իս. ուստի պարզապէս Վարչութեան յղուիլ կառաջարկեմ։

Ատենապետ փաշան՝ յանձնախմբի տեղեկագրին սոյն Բ. մասը Մէրեէմ - Գուլի էֆէնտիի առաջարկած բարեփոխութեամբ հանդերձ քուէի դրաւ՝ որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ Ժողովէն։

Ատենապետ փաշան անմիջապէս յանձնախմբի տեղեկագրին Գ. մասը կարդաց, որ է,

« Գաւառաց մէջ Սահմանադրապէս կազմեալ ժողովները տարտղնող եւոյն ապրեցութեան տէր անձանց մասին՝ Յանձնաժողովս կառաջարկէ թէ Կեդր. Վարչութիւնն այդ կարգի անձանց հակոդգոյին և հակասահմանադրական գործերը հատատասելս ստուգելէն ետքը երկկոս յանդգնութիւն և յօրինապահութիւն պէտք է հրատարել. եթէ դարձեալ տնտատեն և ազգային իշխանութեան չհնազանդին, այն ատեն պէտք է Բ. դրան միջոցաւ Պատրիարքական իշխանութիւնն ի գործ դնել անանց դէմ և սահմանագրական կազմեալ ու տապալեալ ժողովներն իրենց պաշտօնին մէջ պէտք է հաստատել »։

Ատոր վրայ երեսփոխաններն ի դիտողութիւն հրատարեալ եւոյ տեսնելով որ խօսք ուզող չկայ, Ատենապետ փաշան քուէի դրաւ տեղեկագրին սոյն Գ. մասը, որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ Ժողովէն։

Նոյնպէս՝ Ատենապետ փաշան յանձնախմբի տեղեկագրին Դ. և վերջին մասն ալ կարդաց, որ է

« Դասատուաց և դասատարակաց մասին Ազգանպատիւ Սրբազան Պատրիարք Հոր առաջարկութեան վրայ Յանձնաժողովս կդիտէ թէ ոչ միայն դասատու և դասատարակ, այլ և ամենայն անհատ ազգային՝ որ սահմանադրութեան հակառակ կվարուին, քաղաքներ՝ գիւղեր և թաղեր վերի վայր կյուզեն, Ազգային Վարչութեան անհնազանդ կդտնուին և անոր դէմ գրգռութիւն և ապստամբ կհնանեն, պէտք է որ վարչութեան առջև դատաստանի բերուին, և բընութեամբ յանցանքնին ուսուցուելէն ետքն ըստ օրինի պատժուին ընտրողութեան կամ ընտրելութեան իրաւունքէ զրկուելով, և եթէ հարկ ըլլայ քաղաքական իշխանութեան ձեռքը ալ պէտք է զսպուին »։

Դիտողութիւն ընող չըլլալով, տեղեկագրին սոյն Դ. և վերջին մասն ալ քուէի դրուելէ ետև միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ Ժողովէն։

Գ.

Յեղեկագիր Իրաւասութեան դիւանին

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այվազեան Մասթիոս էֆէնտիի պատճառարանեալ հրաժարականին խնդրոյ առթիւ Նախորդ Իրաւասութեան դիւանին տեղեկագիրն, որ արձանագրուած է նախընթաց բացման վերջին նստի ատենագրութեան մէջ, վիճաբանութեան ենթարկելու համար Օրակարգն անցունել որոշած էր Ժողովս։ Այժմ վիճաբանութեան կարգը նոյն տեղեկագրին է. յիշողութիւններդ նորոգելու համար պիտի կարդամ զայն. դիտողութիւն ունեցողները թող պատրաստուին խօսք ուզելու։

Յիշեալ տեղեկագիրը կարդացուեցաւ։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ց. ԷՖ.— Այս խնդիրն այնչափ հինցաւ որ դժուարաւ կյիշեմ. բայց յիշածս չտալ պիտի խօսիմ և իմ կարծիքս պիտի յայտնեմ։

Եթէ Իրաւասութեան դիւանը Սրբազան Պատրիարքին և 12 երեսփոխանաց առաջարկութիւնն ընդունելի դատելու համար բաւական կնկատի Այվազեան էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարականը յղել Վարչութեան, ինչ հարկ կայ Ազգային Ժողովին յղուելու. թող Այվազեան էֆէնտի ուզածի գլուխ Վարչութեան, որով երկու գործը մէկէն տեսնուած կըլլայ. քանի որ այդ հրաժարականին խմբագրը զոր էր Իւթիճեան էֆէնտիի դէմ, որ ըսել է պարզապէս անձնական խնդիր մ'է, ամենևին վերաբերութիւն չունի այս Ժողովին, և աւելորդ կտեսնեմ Այվազեան էֆէնտիի հոս բողոքելը։ Հետևապէս՝ Իրաւասութեան դիւանին առաջարկութիւնը չեմ ընդունիր, որ անուղղակի կերպով հոս կբերէ խնդիրը։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մէրեէմ-գուլի էֆէնտիին հանած եզրակացութիւնը սխալ է. և ըրած առաջարկութիւնն ալ շատ ուշ մնացած է. վասն զի Այվազեան էֆէնտի պատճառաբանեալ հրաժարագիր տուած է, Ժողովն ալ զայն նկատողութեան առնել արժան դատելով յղեր է ի

նախապատուութիւն առ Խրատուութեան դիւանն. այն դիւանն ալ տեղեկագրով մը խնդիրը ժողովիս բերելով կառաջարկէ որ զրկուի Վարչութեան ի քննութիւն։ Հիմա կամ պէտք է կարեւորութիւն տալ խնդրոյն, և յղել առ Վարչութիւն, և կամ անկարեւոր համարելով մերժել։ Մերժել չկրնալով թող ինքնին երթայ Վարչութեան քանի ուշադրութիւն չունի։ Երեսփոխան մը կրնայ թէ չեմ կրնար գալ նստիլ այս ժողովին մէջ, որն որ ասկից երեսփոխանէ մը յիրաւանց անկեալ հրատարակուած է ժողովրդին, եւն. մինչև որ նոյն երեսփոխանն ըստ օրինի չզատուի։ Դարձեալ նոյն երեսփոխան Այվազեան էֆէնտին կը բողոքէ թէ ինքը կառավարական անուանեալ է Խաթինճեան էֆէնտի երեսփոխանէն, և ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսն ալ կաշառուած. իբր թէ 25000 մանէթ կաշառք տուեր է Վեհ. Կաթողիկոսը նախկին Պատրիարքը պաշտօնէ ձգելու համար. այս բանիս համար Վեհ. Կաթողիկոսի կողմէն ալ գիտցութիւն և բողոք եկած է, և քննութիւն պահանջուեր է Վարչութենէն, ինչպէս Խրատուութեան դիւանն առուեր է Վարչութեան դիւանատունէն։

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Վեհ. Կաթողիկոսը 25 փարայ չտար։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ աղէկ. բայց Խաթինճեան էֆէնտի մարերը գայթակղեցնելու համար այդ հրատարակութիւնն ըրած է. արդեն պէտք է որ կամ հաստատէ, և կամ թէ չկրնայ հաստատել, զրպարտչի պատիժը կրէ։ Ես ինքս ալ Խաթինճեան էֆէնտիի դէմ առ Վարչութիւնն բողոքած եմ ինծի դէմ ըրած սուտ և զրպարտիչ հրատարակութեանց համար, և Վարչութիւնը ցարդ նկատողութեան չառաւ իմ բողոքս. Այվազեան էֆէնտիի տուած բողոքին ելքը կսպասէի, որպէս զի ըստ այնմ պէտք եղածն ես ալ ընեմ։ Շատ կրնամ ըսել Այվազեան էֆէնտի, որ աղըայիկ ժողովիս բողոքէ. նոյնպէս իրաւունք են Խրատուութեան դիւանի տեղեկագրին գիտցութիւնները, և համած եզրակացութիւնը թէ, արդարև պէտք է որ Խաթինճեան էֆէնտի դատաստանի ենթարկուի իր այդ հրատարակութեանցը համար։

(Ընդմիջում և աղմուկ)

Կը տեսնէք որ այս ընդմիջումներն ու աղմուկները ալ կողմէն կըլլան, մինչդեռ ձախ կողմը հանդարտութեամբ մտիկ կընէ։ Ինչո՞ւ չէք թողուր որ խօսիմ, ճշմարտութիւնը լսելու պէտք է որ վարժուիք. շատ բան բաին մեզի համար, և երբ մենք դատաստան կը պահանջենք, իրենք այդ բաղձերը դատաստանէ խոյս կուտան. բայց պատմութեան ձեռքէն կրնա՞ն խոյս տալ։

(Դարձեալ ընդմիջում և աղմուկ)

Դուք կը կարծէք թէ այդ ձեւերով կը յաղթէ՞ք։ Այս տեսակ խնդրոց մէջ կողմնակալութիւնն արժէք չունի. այն ատեանին մէջ ճշմարտութիւնն և արդարութիւնն յարգել մեր առմենուս պարտքն է։ Ես ինքս երբեմն այն ատենին մէջ Գէորգ Կաթողիկոսի դէմ խօսած եմ. բայց ըսելով և առուգելով Ներսէս Վեհափառութեան ազգօգուտ ձեռնարկութիւնները, ներկայ ատիւ կը գովեմ և կը հաչակեմ դարձեալ այն ատենիս մէջ. վասն զի ճշմարտութիւնն ու արդարութիւնն այսպէս կը պահանջեն։

(Ընդմիջում և աղմուկ)

Արժանահաւատ անձինք վկայեցին ինձ, ոսրանց առաջինն եղաւ Սրբազան Պատրիարքը։

(Աղմուկը)

Իւրաքանչիւր երեսփոխան պարտական է հետեւիլ ճշմարտութեան և արդարութեան։ Ըստ այսմ պէտք է դատել Այվազեան էֆէնտիի բողոքը, և Խաթինճեան էֆէնտին դատաստանի ենթարկելու արժանի ըլլալն ընդունել և յղել Վարչութեան ի քննութիւն։

(Աղմուկը)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, հանդարտեցէք. խնդիր մը կայ, որուն համար Խրատուութեան դիւաննիս կառաջարկէ Վարչութեան յղել. Մէրճէմ-զատէ էֆէնտին չէ կրնար. իսկ Փափազեան էֆէնտին այո կըսէ։ Տեսնենք Խրատուութեան դիւանին տեղեկագրին ի՞նչ կըսէ։ Խօսքը Մատթէոս Սրբազանինն է։

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. [Տեղեկաբեր]. — Խրատուութեան դիւանն Այվազեան Մատթէոս էֆէնտիի պատձառաբանեալ հրաժարականն անձնական խնդիր չնկատեց. չէր կրնար ալ նկատել, քանի որ Այվազեան էֆ. իր պատձառաբանեալ հրաժարագրովը կըսէր թէ Կարապետ էֆ. Խաթինճեան հաստատուած է թէ Ազգ. ժողովին իր օրինաւորութիւնը կորուսած է և թէ ամենայն Հայոց Հայրապետը Կ. Պոլսոյ Պատրիարքը ձգելու համար 25 հազար մանէթ կաշառք տուած է, և ասոնց ստոյգ կամ անստոյգ ըլլալուն քննութիւնը կպահանջէր։ Խրատուութեան դիւանն զուտ Ազգային կերպարանք ունեցող այսպիսի խնդիր մը՝ ի՞նչպէս կրնար Այվազեան և Խաթինճեան էֆէնտիներու մէջ անձնական վէճ բաղդել։

(Բարձրաձայն բողոք Խաթինճեան Կ. էֆ. ի կողմէն ընդդէմ տեղեկաբերին)

Եւ որովհետեւ ժողովս այդ պատձառաբանեալ հրաժարագրին միջոցին ատանց մերժելու նախապատուութեան յղեր է, հարկաւ կարծիք տալու համար թէ նկատողութեան առնուլ հա՞րկ է թէ ոչ. Խրատուութեան դիւանն ալ նկատողութեան արժանի դատելով իբրև զատական խնդիր Վարչութեան պատկանիլը եզրակացուցեր է, որպէս զի հարկ եղած քննութիւնն ու դատաստանը ըլլալով առուգութիւնն երեւան գայ, և ո՞վ որ է յանցաւորը պատժուի։

Խաթինճեան էֆ. խօսք ուզեց և սկսաւ 25 հազար մանէթի խնդրոյն վրայ խօսիլ, սակայն վերջահաս աղմկին պատձառաւ, որ Խորհրդարանին ներքաշնակութիւնը պահ մը խանգարեց, չը կրցաւ շարունակել։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, տեարք հանդարտեցէք, և բեմական ազատութիւնը մի բանաբարէք. թէեւ վիճաբանութեան շարունակութիւնը չէր ուզեր, քուէով յայտնեցէք ձեր կամքը։

Ձայս ըսելով Ատենապետ Փաշան անմիջապէս քուէի դրաւ խնդրելու համար թէ ժողովը վիճաբանութեան փակո՞ւմը կամ թէ շարունակութիւնը կուզէ։

Ժողովը մեծամասնութեամբ վիճաբանութիւնը փակել ՈՐՈՇԵՑ։

Յետոյ Ատենապետ Փաշան քուէի դրաւ Խրատուութեան դիւանի տեղեկագրին եզրակացութիւնը՝ որ է յղել Այվազեան էֆէնտիի պատձառաբանեալ հրաժարականն առ Ազգ. Վարչութիւնն ի քննութիւն։

Ժողովը 17 ձայնի դէմ 19ով Այվազեան էֆէնտիի վրաժարականին նկատմամբ Խրատուութեան դիւանի տեղեկագրին եզրակացութիւնն ԸՆԴՈՒՆԵՑ։

—◦◦◦—

Արդիւնք քուէարկութեան ընտրութեան Քաղաքական Ժողովոյ

Ատենապետ Փաշան՝ Քաղ. Ժողովոյ ընտրութեան համար պահ մը առաջ քննչաց միջոցաւ ստանձնեն սկսած և շարունակուած քուէհամարին արդիւնքը նոյն քննչաց կողմանէ բաւական տետրագրեալ և դիւանին հաղորդեալ ըլլալը յայտնելով, կարդաց զայն և հրատարակեց ժողովին. որ է՝

1. Ալլրօ Սահակ	էֆէնտի	քուէ	58
2. Նորատունկեան Յակոբ	»	»	58
3. Կիւլպէնկեան Աէրովբէ	»	»	57
4. Շահպազ Կարապետ	»	»	52
5. Լամբեան Յովհաննէս	»	»	48
6. Ադեամբեան Յովհաննէս	»	»	48
7. Սարգսեան Ալեքսան	»	»	46
8. Մազլումեան Սերոբէ	»	»	44

9.	Կրոնիկեան Անդրանիկ սէյ	բուէ	41
10.	Մարկոսեան Գրիգոր էֆէնտի	»	40
11.	Պոյաճեան Յովհաննէս	»	36
12.	Նուրեան Յովհաննէս	»	33
13.	Բաղդասեան Յակոբ	»	32
14.	Ցրէնկեան Յակոբ	»	31

Հետևապէս այն ընտրութիւնը փոխերացու Ժողովէն, և ընտրեալք Բաղ. Ժողովոյ անդամ հռչակուեցան,

ՑՈՒՑԱԿ

Հետևեալ երեք անգամ բացակայ զանուող Երեսփոխանաց

Ատենապետ Փաշան՝ ներկայութեան սուլթան Ատենապետիր էֆէնտիին ձեռօք բացուած հետևեալ ցուցակը Ժողովին ներկայացնելով՝ որ է.

Տ. Սուքիաս քշնայ Մայր Եկեղեցոյ
Յովհաննէս էֆ. Սիրբէնեան
Յովհաննէս » Թորոսանճեան
Պօղոս » Պառնասեան
Տիգրան » Կիւմիւշկէրտանեան
Մկրտիչ » Կիւրճեան

յայտնեց որ նշանակեալ 6 երեսփոխաններն առանց յայտարարութեան երեք անգամ յաջորդաբար բացակայ մնացած են, թէև մասնաւորապէս իրենց նամակ գրկուելով ծանուցուած է որ եթէ այս անգամ ալ բացակայ զանուին, ըստ օրէնսդրութեան Ներքին Կանոնադրութեան հրաժարեալ պիտի համարուին. և թէ նամակներն ստացած ըլլալնուն և սատարութիւն ընկալաղներ ընդունած է դիւանը։

Ատենապետ Փաշան այս յայտարարութեան հետ առաջարկեց նաև որ Ժողովն արտօնութիւն տայ իրեն վերջին անգամ մ'ալ ինք գրելու և հրաւիրելու յիշեալ երեսփոխաններն ի Ժողով։

Ատենապետ Փաշային այն առաջարկութիւնը քուէի դրուելով ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՒ Ժողովն։

Ատեանը գացուեցաւ ժամն 9 ½-ին։

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱԳՐԵՏ
Դ. Ա. ՄԵԼՔԻՍԵԱՆ Ե. ՇԻՐԱԶԵԱՆ

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՃԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ թանգարը և Հայ գրավաճառաց քով: